251. Ինչքան ժամանակում զնացքը կանցնի 678 կմ, յեթե նա միջին հաշվով ժամում  $28\frac{1}{4}$  կմ ճանապարհ է անցնում և յեթե յիրեք կանգառներում նա կանգնում է  $\frac{1}{6}$ -ական ժամ, հինգ կանգառներում՝  $\frac{1}{4}$ -ական ժամ և իննը կանգառներում՝  $\frac{1}{12}$ -ական ժամ:

252. Մեկ վառարանի համար մեկ ամսում անհրաժեշտ է  $\frac{3}{5}$  խոր, մ փայտ: Ինչքան կնստի տասը այդպիսի վառարաններ տաքացնելը  $6\frac{1}{2}$  ամսվա ընթացքում, յեթե 1 խոր, մ փայտն արժե  $9\frac{1}{5}$  ու:

253. Կոպերատիվը յերկու հալ մանուֆակտուրա ստացավ, ընդամենն  $373\frac{3}{4}$  մ,  $595\frac{3}{4}$  ու, ընդհանուր արժողությամբ Մեկ հալը  $192\frac{1}{2}$  մ էր, վորի մեկ մետրը արժեր  $1\frac{2}{5}$  ու: Ինչ արժեր մյուս հալի մեկ մետրը:

254.  $22\frac{1}{2}$  մ յերկարություն է 15 մ լայնություն ունեցող տան հիմքի համար փորել են 2 մ յորությամբ: Քանի սայլ է հարկավոր փորված հողը կրելու համար, յեթե մեկ սայլը կարող է վերցնել  $\frac{3}{5}$  s, իսկ 1 խոր, դմ հողը կշռում է  $1\frac{3}{5}$  կգ:

255. Տան յերկարությունը  $16\frac{1}{2}$  մ է, նրա լայնությունը կազմում է յերկարության  $\frac{2}{3}$  մասը, իսկ պատերի բարձրությունը կազմում է տան յերկարության  $\frac{2}{11}$  մասը: Ի՞նչ կնստի այդ տունը սվաղելը, յեթե 1 քառ. մ-ի համար վերցնում են  $\frac{9}{10}$  ու, ընդվորում պատահաններն ու դռներն ընդհանուր մահերեսից չեն հանում:

256. Աղալու ժամանակ ցորենը կորցնում է իր կշռի  $\frac{1}{5}$  մասը: Ինչքան հաց կստացվի  $1\frac{1}{2}$  ց ցորենից, յեթե թխելու ժամանակ ալյուրի կշռի  $\frac{2}{5}$  մասի չավելի աճ է ստացված:

257. Խանութից գնեցին  $3\frac{1}{2}$  կգ թխվածք, կիրովրամը  $2\frac{1}{2}$  ուրբով, 15 կգ աղ, կիրովրամը  $\frac{4}{25}$  ուրբով և վորոշ քանակությամբ կրուպա, վորի  $\frac{3}{5}$  կգ-ն արժե 36 կոպ.: Գիտենալով, վոր ամբողջ առքին վճարեցին  $17\frac{3}{20}$  ու, վորոշեցեք, թե քանի կիրովրամ կրուպա գնեցին:

258. Կարի արհեստանոցը գնեց 5390 ու մահուդ, մեարը  $12\frac{1}{4}$  ու: Այդ մահուդի  $\frac{11}{20}$  մասից կոստյումներ կարեցին, իսկ մնացած մասից՝ 72 միատեսակ վերարկու: Յուրաքանչյուր վերարկույին ինչքան մահուդ գնաց:

259. Ճեպընթաց գնացքը 142 կմ ճանապարհն անցնում է 3 ժամում, իսկ ապրանքատար գնացքը 128 կմ-ն անցնում է 6 ժամում: Ապրանքատար գնացքն մեկնելուց  $9\frac{3}{4}$  ժամ հետո նրա հետևից մեկնում է ճեպընթաց գնացքը: Ինչքան ժամանակից հետո ճեպընթաց գնացքը կհասնի ապրանքատարին:

260. ա) Արագացրած գնացքը Մոսկվայից Լինինգրադ է հասնում 12 ժամում, իսկ ճեպընթացը՝ 10 ժամում: Մոսկվայից արագացրած գնացքի մեկնելուց  $\frac{3}{4}$  ժամ հետո նրա հետևից մեկնում է ճեպընթաց գնացքը: Քանի ժամ հետո ճեպընթաց գնացքը կհասնի արագացրած գնացքին:

բ) Մի շոգենավ, դուրս գալով A նավահանգստից դեպի B նավահանգիստը, պետք է այնտեղ հասնի մեկնելուց 20 ժամ հետո: Նույն ժամանակ B նավահանգստից դուրս յեկավ մի ուրիշ շոգենավ այն հաշվով, վոր A նավահանգիստը հասնի մեկնելուց 40 ժամ հետո: Մեկնելուց քանի ժամ հետո պետք է այդ շոգենավերը հանդիպեն իրար:

261. ա) Ավտոմոբիլն առաջին ժամում անցավ քաղաքների միջև յեղած հեռավորության  $\frac{2}{7}$  մասը, յերկրորդ ժամում՝ մնացորդի  $\frac{7}{13}$  մասը և յերրորդ ժամում՝ մնացած 90 կմ-ը: Ինչից յե հավասար այդ քաղաքների հեռավորությունը:

բ) Ավտոմոբիլը պետք է յերկու վայրերի միջև յեղած հեռավորությունն անցնի 7 որում, շարժվելով միևնույն արագությամբ: Առաջին որը նա ացավ ճանապարհի  $\frac{1}{9}$  մասը միայն, բայց յերկրորդ որը նա անցավ ամբողջ ճանապարհի  $\frac{1}{5}$  մասը: Այդ յերկու որվա ընթացքում միջին արագությունը համապատասխանում է պահանջվածին. փոքր է թե մեծ:

262. ա) Յերկու գնացք միաժամանակ դուրս են գալիս իրար հանդեպ՝ մեկը Տուլայից դեպի Պենզ, իսկ մյուսը Պենզից դեպի Տուլա: Այդ քաղաքների հեռավորությունը հավասար է 586 կմ-ի: Առաջին գնացքը մեկ ժամում անցնում է  $28\frac{4}{5}$  կմ, իսկ յերկրորդը՝  $32\frac{1}{2}$  կմ: Ինչքան կլինի այդ գնացքների միջև յեղած հեռավորությունը 6  $\frac{3}{4}$  ժամ հետո:

բ) Ինչից յե հավասար գնացքի շարժման միջին արագու-

թյունը, յեթե նա առաջին ժամում անցավ  $28\frac{4}{5}$  կմ, յերկրորդ

ժամում՝  $2\frac{1}{2}$  կմ ավել քան առաջին ժամում, և յերրորդ ժա-

մում  $1\frac{3}{4}$  կմ ավել քան առաջին ժամում:

դ) Դերձակին քաճան տվեցին մանկական զգեստներ կա-  
րե ու համար, այն հաշվով, Վոր յուրաքանչյուր զգեստին կգնա  
 $2\frac{3}{4}$  մ: Բայց յերբ դերձակը կարեց պատվիրած 18 զգեստը,

նրա մոտ մնաց  $4\frac{1}{2}$  մ քաթան: Իրականում քանի՞ մետր քա-  
թան գործածվեց յուրաքանչյուր զգեստին: Ինչքան քաթան էյին  
ավել դերձակին:

263. Արհանտեսության ամբողջ հողի  $\frac{4}{9}$  մասը գրավում է

մարգագետինը, մնացածի  $\frac{3}{7}$  մասը գրավում է վարելահողը,  
իսկ մնացածն անտառ է: Գտեք ամբողջ հողի մակերեսն ու ան-  
տառի մակերեսը, յեթե հայտնի լի, Վոր մարգագետնի մակերե-  
սը վարելահողի մակերեսից 216  $\frac{2}{3}$  հա-ով մեծ է:

264. 205 ուղբով գնել են յերկու տեսակ մահուդ, առաջի-  
նի մեարը  $6\frac{1}{4}$  ուղբով, յերկրորդի մեարը՝  $4\frac{3}{8}$  ուղբով:  
Առաջինը 8 մ-ով քիչ է, քան յերկրորդը: Յուրաքանչյուր տե-  
սակից ինչքան մահուդ է գնված:

265. Յեթե անհայտ թվի  $\frac{3}{17}$  մասին ավելացնենք 150, ապա

կստանանք նույն անհայտ թվի  $\frac{2}{3}$  մասը: Գտեք այդ թիվը:

266. Յեթե անհայտ թվի  $\frac{5}{12}$  մասից հանենք 99, ապա

կստանանք նույն անհայտ թվի  $\frac{3}{16}$  մասը: Գտեք այդ թիվը:

267. Տուրիստը գնում էր մի քաղաքից մյուսը: Անցնելով

այդ քաղաքների հեռավորության  $\frac{5}{41}$  մասը, նա հաճեց, Վոր

անցածից 93 կմ-ով ավել ճանապարհ է մնում անցնելու: Գտեք  
այդ քաղաքների հեռավորությունը:

268. Զորքի ջոկատը բաղկացած է հետևակից, հեծակորից  
և հրետանուց: Ա՛րողջ ջոկատի  $\frac{3}{5}$  մասը կազմում է հետևակը,

հեծակորը կազմում է հետևակի  $\frac{5}{8}$  մասը, իսկ մնացածը հրե-  
տանին է: Վորոշեցեք, ինչքան մարդ կա ամբողջ ջոկատում,  
յեթե հայտնի լի, Վոր հեծակորը հրետանավորներից 4200 հո-  
գով ավել է:

269. Դրամարկդից բաց են թողել ամբողջ դրամի  $\frac{3}{11}$  մասը

աչնուհետև մնացորդի  $\frac{1}{4}$  մասը, հետո նոր մնացորդի  $\frac{2}{7}$  մասը

և, վերջապես, յերրորդ մնացորդի  $\frac{7}{9}$  մասը: Դրանից հետո դրա-  
մարկդում մնաց 660 ուղբի: Սկզբում ինչքան փող կար դրա-  
մարկդում:

270. Յերկու թվերի տարբերությունը հավասար է 40-ի:  
Յեթե առաջին թվից հանենք նրա  $\frac{4}{5}$  մասը, իսկ յերկրորդից՝  
նրա  $\frac{2}{3}$  մասը, ապա հավասար մնացորդներ կստանանք: Գտեք  
այդ թվերը:

271. Յերկու արկղների մեջ կա 390 բոլտ: Քանի՞ հատ կա  
յուրաքանչյուրի մեջ, յեթե առաջին արկղի բոլտերի թիվը հա-  
վասար է յերկրորդ արկղի բոլտերի թվի  $\frac{2}{3}$  մասին:

272. Յեթե գործարանի բանվորների թվին ավելացնենք  
նույնքան և ելի նրանց թվի  $\frac{2}{9}$  մասը, ապա կստացվի 3400  
մարդ: Քանի՞ բանվոր կա գործարանում:

273. Յերկու տրակտոր հող էյին վարում, նրանցից առա-

Ղինը վարեց չերկրորդի վարածի  $\frac{13}{15}$  մասի չափով: Քանի՞ հեկտար  
աշակեցին յերկու տրակտորը միասին, յի՞թե առաջինը 34 հա-ով  
պահաս վարեց քան յերկրորդը:

274. ա) յերկու թվերի գումարը հավասար է 4512-ի: Մի  
գումարելին կազմում է մյուսի  $\frac{5}{11}$  մասը: Գտե՛ք յերկու գումար-  
ելիքները:

բ) Յերկու թվերի միջևն թվաբանականը հավասար է  $3\frac{1}{16}$ -ի,  
մեկ թիվը հավասար է  $2\frac{3}{8}$ -ի: Ինչի՞ յե հավասար յերկրորդ  
թիվը:

275. Յերկու թվերի գումարը հավասար է  $52\frac{1}{2}$ -ի. առա-  
ջին թիվը հավասար է յերկրորդի  $\frac{3}{4}$  մասին: Գտե՛ք այդ թվերը:

276. Յերկու թվերի գումարը հավասար է 1-ի: Գտե՛ք այդ  
թվերը, պիտենալով, վոր առաջինի  $\frac{1}{2}$ -ը հավասար է յերկրորդի  
 $\frac{1}{3}$  մասին:

277. Յերկու թվերի տարբերությունը հավասար է 45-ի:  
Առաջին թվի մեկ հինգերորդ մասը հավասար է յերկրորդի  
 $\frac{1}{2}$ -ին: Վճրո՞նք են այդ թվերը:

278. Յերեք խորհանոթություն ունեն 356: հա հող: Առա-  
ջինում կա յերրորդի հողի  $\frac{1}{2}$ -ի չափ, իսկ յերկրորդում  $\frac{1}{3}$ -ի  
չափ հող: Այդ խորհանոթություններից յուրաքանչյուրը քանի՞  
հեկտար հող ունի:

279. Յերկու կոլտնտեսություններում կա 270 ձի: Ձիերի  
թիվը նրանցից մեկում  $1\frac{1}{2}$  անգամ ավել է, քան մյուսում:  
Յուրաքանչյուր կոլտնտեսությունում քանի՞ ձի կա:

280. ա) 13 մ յերկարություն ունեցող տախտակը պետք է  
յերկու մասի բաժանել այնպես, վոր նրանցից մեկի յերկարու-  
թյունը  $3\frac{1}{2}$  անգամ մեծ լինի մյուսի յերկարությունից: Ինչ-  
քան պետք է լինի յուրաքանչյուր կտորի յերկարությունը:

բ)  $8\frac{1}{2}$  մ յերկարություն ունեցող մետաղալարը յերեք  
մասի բաժանելին այնպես, վոր յերկրորդ մասը յերկար է յեր-  
րորդից  $3\frac{1}{5}$  մ-ով, իսկ առաջինը մեծ է յերկրորդից  $1\frac{3}{4}$  մ-ով:  
Գտե՛ք յուրաքանչյուր մասի յերկարությունը:

281. Յերեք պարկի մեջ կար ընդամենը 460 խնձոր: Առա-  
ջին պարկի խնձորների թիվը հավասար էր յերկրորդ պարկի  
խնձորների թվի  $\frac{3}{4}$  մասին, իսկ յերրորդ պարկում  $1\frac{1}{2}$  անգամ  
ավել խնձոր կար, քան տոաջինում: Ինչքան խնձոր կար յու-  
րաքանչյուր պարկում:

282. Յերկու թվերի գումարը հավասար է  $1\frac{1}{2}$ -ի, իսկ  
նրացից մեկը  $1\frac{1}{2}$  անգամ մեծ է մյուսից: Ինչի՞ յե հավասար  
յուրաքանչյուր թիվը:

283. Այժմ ժամը քանի՞սն է, յեթե որվա մնացած մասը  
 $\frac{2}{5}$  անգամ մեծ է անցած մասից:

284. ա) Այժմ ժամը քանի՞սն է, յեթե որվա անցած մասը  
հավասար է մնացածի  $\frac{1}{3}$  մասին:

բ) Ջուրը սառույց դառնալով, մեծանում է ծավալի  $\frac{1}{11}$   
մասով: Ծավալի վճի մասով է փոքրանում հաշվելու ժամանակ:

285. Դասարանում ցուցակով 38 աշակերտ կա: Պիտեն  
ջոկատի կողմից չընդգրկված աշակերտների թիվը կազմում է  
պիտենների  $\frac{3}{16}$  մասը: Քանի՞ պիտեն կա դասարանում:

236. ա) Յերկու թվերի գումարը հավասար է 45-ի: Այդ թվերից մեկը մյուսի վրա բաժանելուց ստացված քանորդը հավասար է  $2\frac{1}{3}$ -ի: Գտեք այդ թվերը:

բ)  $22\frac{1}{2}$  մ յերկարութուն ունեցող պարանը պետք է բաժանել յերեք մասի այնպես, վոր յերկրորդ մասն առաջինից յերկար լինի  $3\frac{1}{2}$  անգամ, իսկ յերրորդ մասն առաջինից յերկար լինի  $2\frac{1}{4}$  անգամ: Գտեք առաջին մասի յերկարութունը:

287. Բանվորը պատվերը կատարեց  $10\frac{1}{2}$  օրում: Այդ պատվերի վճար մասը կատարեց նա  $3\frac{1}{2}$  օրում:

288. ա) Վաննան յերկու ծորակ ուներ. տաք՝ վորը կարող է այդ վաննան լցնել  $12\frac{1}{2}$  րոպեյում, և սառը՝ վորը կարող է վաննան լցնել 10 րոպեյում: Յերկու ծորակը բաց արին  $2\frac{1}{2}$  րոպե, վորից հետո տաք ծորակը փակեցին: Քանի՞ րոպե հետո սառը ծորակը լցրեց վաննան:

բ) Վաննալի չորը R-ի  $38^\circ$  և C-ի քանի՞ աստիճան է կազմում այդ:

289. Զանազան յերկրների դրամական միավորների արժեքների աղյուսակը ուղղվեց (1932 թ.).

1 ֆունտ ստերլինգ (Անգլիա)	1 դոլար ամերիկական	1 գերմանական մարկ	1 շվեդական կրոն	1 ֆրանսիական ֆրանկ	1 չեքոսլովակացի կոբան
$6\frac{16}{25}$ ո.	$1\frac{24}{25}$ ո.	$\frac{6}{13}$ ո.	$\frac{7}{20}$ ո.	$\frac{3}{40}$ ո.	10 ո.

1) Քանի՞ շվեդական կրոն կարելի է ստանալ 9!0 գերմանական մարկով:

2) Քանի՞ ֆրանկ է հարկավոր, վորպեսզի գնվի 90 գերմանական մարկ. 294 դոլար, 249 ֆունտ ստերլինգ:

3) Քանի՞ դոլար է հարկավոր, վորպեսզի գնվի 441 ֆրանկ. 588 մարկ. 686 կրոն:

4) Քանի՞ ֆունտ ստերլինգ է հարկավոր, վորպեսզի գնվի 2178 գերմանական մարկ. 3320 ֆրանկ:

290. Ծակիչը չորաքանչյուր սրտուտի ժամանակ առաջ է շարժվում  $\frac{1}{10}$  մմ: Ինչքան ժամանակ կպահանջվի 1 սմ հաստութուն ունեցող յերկաթաշերտի վրա 10 անցք բանալու համար, յեթե ծակիչը մեկ րոպեյում պտտվում է 120 անգամ և մեկ անցքը վերջացնելուց հետո մյուսն սկսելու համար պահանջվում է  $\frac{1}{2}$  րոպե ժամանակամիջոց:

291. Կոպեքաաիվը ստացավ 3 տակառ յուղ, 1 կիլոգրամը  $8\frac{1}{2}$  ո. արժողութամբ: Առաջին տակառի համախառն կշիռը  $82\frac{1}{8}$  կգ էր, յերկրորդինը  $4\frac{3}{5}$  կգ-ով պակաս էր քան առաջինի կշիռը, իսկ յերրորդինը՝  $3\frac{1}{4}$  կգ-ով ավել էր առաջինի կշիռից: Յուրաքանչյուր դասարկ տակառը կշռում էր  $9\frac{3}{4}$  կգ: Առաջին օրը վաճառեցին ամբողջ յուղի  $\frac{1}{2}$ -ը 48 ո. 65 կ. հավելուրդով: Առաջին օրվա վերջում ինչքան փող ստացան յուղից:

292. Տված է չորս թիվ՝  $5\frac{2}{9}$ ,  $3\frac{1}{2}$ ,  $4\frac{3}{8}$ ,  $1\frac{1}{3}$ : Գործողության նշանների և յեթե անհրաժեշտ է, փակադճերի ոգնութամբ գրեցեք հետևյալ պահանջներից յուրաքանչյուրը և յուրաքանչյուր դեպքում հաշվեցեք արդյունքը:

ա) Առաջին յերկու թվերի տարբերությանն ավելացրեք վերջին յերկու տարբերության:

բ) Առաջին յերկու թվերի գումարից հանեցեք վերջին յերկ ՚ի գումարը:

գ) Առաջին յերկու թվերի տարբերությւնը (գումարը) բաժանեցեք վերջին յերկսի տարբերության վրա:

դ) Առաջին յերկու թվերի արտադրյալը բաժանեցեք նրանց գումարի վրա:

ե) Առաջին թիվը յերկրորդի վրա բաժանելուց ստացված քանորդը բազմապատկեցեք յերրորդ թիվը յերկրորդի վրա բաժանելուց ստացված քանորդով:

293.  $6\frac{1}{2}$  հա-ից հավաքեցին 4 դեզ խոտ: Առաջին դեզում

$20\frac{4}{5}$  s խոտ կա. յերկրորդում առաջինում յեղածի  $\frac{1}{4}$  մասի

չափով պակաս է, յերրորդում՝ առաջինում յեղածի  $\frac{1}{5}$  մասի չա-

փով ավել է, իսկ չորրորդ դեզում  $3\frac{1}{5}$  s-ով քիչ է, քան առա-

ջինում: Հայտի յե, վոր այդ խոտը չորանալով կորցնում է իր կշռի  $\frac{1}{6}$  մասը: Ընդամենն ինչքան խոտ է ստացվել:

294. Յերկու գնացք անցնում են յերկու կայարանների միջև յեղած հեռավորությունը. մեկը՝  $4\frac{1}{2}$  ժամում, իսկ մյուսը՝ 5 ժամում: Առաջինը մեկ ժամում 3 կմ ավել է անցնում, քան յերկրորդը: Վորոշեցեք կայարանների միջև յեղած հեռավորությունը և յուրաքանչյուր գնացքի մեկ ժամում անցած կիրովետրերի թիվը:

295. Շոգենավը դուրս գալով A նավահանգստից դեպի B նավահանգիստը, պետք է այնտեղ հասնել մեկնելուց 50 ժամ հետո: Միաժամանակ մի ուրիշ շոգենավը դուրս յեկավ B նավահանգստից այն հաշվով, վոր A նավահանգիստը հասնի մեկնելուց 24 ժամ հետո: Մեկնելուց քանի՞ ժամ հետո այդ շոգենավերը կհանդիպեն իրար:

296. Յերկու գնացք մեկնում են միևնույն կայարանից: Մեկը մեկնում է առավոտյան ժամը 5-ին, իսկ մյուսը ժամը

8-ն անց 16 րոպեյին: Առաջին գնացքը գում է ժամում 32 կմ միջին արագությամբ, յերկրորդը, ճեպընթացը դնում է ժամում 51 կմ միջին արագությամբ: Ժամը քանիսին և մեկնեան կայարանից ինչ հեռավորության վրա այդ գնացքների միջև յեղած հեռավորությունը կդառնա 26 կմ, յեթե կանգաններում այդ գնացքները հավասար ժամանակ են կորցնում:

297. Արշավագառտի շրջանագիծը 2400 մ է: Այդ շրջանագծով միևնույն ուղղությամբ արշավում են յերկու ձի, վորոնք իրենց շարժումն սկսում են միաժամանակ, բայց շրջանագծի յերկու ուղիղ հակադիր կետերից: Առաջին ձին դիտողը նկատեց, վոր նա  $\frac{1}{2}$  րոպեյում անցավ 420 մ իսկ յերկրորդ ձին դիտողը նկա-

տեց, վոր նա 1 րոպե 15 վայրկյանում անցավ 420 մ: Արշավագառտով քանի՞ շրջանագիծ պետք է անցնի յերկրորդ ձին, վոր հասնի առաջինին:

298. Յերկու բանվոր մի աշխատանք կատարեցին, մեկը մյուսից հետո աշխատելով: Առաջին բանվորն աշխատեց 10 որ, նա ալիլի փոքր արտադրողականությամբ եր աշխատում, քան յերկրորդը և որական ստացավ յերկրորդի ստացած վորդի միայն  $\frac{3}{4}$  մասը, այսինքն 1 ու 20 կ-ով ավելի քիչ, քան յերկրորդը:

Յերկրորդ բանվորը քանի՞ որից ավարտեց աշխատանքը, յեթե նրան վճարեցին ընդամենը 74 ու 40 կ.:

299. Ժամացույցի սլաքները ցույց են տալիս կեսօր: Յ՛բրը նրանք կհանդիպեն հաջորդ անգամ:

300. Ժամում 10 կմ անցնող կառքը կարճ է արդյոք անցնել նրանից 200 մ հեռավորության վրա գտնվող յերկաթուղուց, նախքան սեմաֆորը փակելը. սեմաֆորը փակում են գնացքն այդ տեղով անցնելուց 2 րոպե առաջ: Գնացքը դեռ 1350 մ հեռավորության վրա յե գտնվում այնտեղից, վորտեղով պետք է անցնի կառքը և գնում է իր նորմալ արագության  $\frac{3}{4}$ -ին հավասար արագությամբ: Նորմալ արագությունը մեկ ժամում հավասար է 36 կմ-ի:

301. Արտագրողն առաջին օրը արտագրեց արված աշխատանքի  $\frac{1}{4}$  մասը. յերկրորդ օրն արտագրեց մնացորդի  $\frac{1}{2}$  մասը:

Աշխատանքի վեր մասը մնաց արտագրելու: Ինչքան ժամանակում նա կարտագրի մնացածը, յեթե աշխատի այսպիսի արագութեամբ, ինչ արագութեամբ աշխատեց յերկրորդ օրը, և ինչ կստանա նա ամբողջ աշխատանքի համար, յեթե առաջին յերկու օրվա համար նրան վճարում են 6 ո. 40 կ.:

302. Յերկու հետիտան ճանապարհով գնում են դեպի միևնույն կողմ և միևնույն վայրը, քայց նրանք իրենց ճանապարհորդութեանն սկսեցին իրարից 100 մ հեռավորութեան ունեցող յերկու կետերից: Յերկու հետիտանը դուրս յեկան միաժամանակ և նպատակին ել հասան միաժամանակ: Վորողեցեք յուրաքանչյուր հետիտանի անցած ճանապարհը, յեթե հայտնի չե, վոր առաջինը 39 քայլ է անում այն ժամանակ, յերբ յերկրորդը միայն 30 քայլ է անում, և վոր 40 մ հեռավորութեան վրա առաջինը 60 քայլ է անում, իսկ յերկրորդը՝ 50 քայլ:

V. ՇԱՏՆՈՐԳՎԱԾՆ ԿՈՐՐՎԱՆՔ

Տասնորդական կտրուակի կարգայն ու գրելը: Մեծացելն ու փոքացելն: 0, 100, 1000 անգամ	1. Կարգացեք ճտեկյալ տասնորդական կտորակները. 0,9; 3 8; 0,25; 45,09; 0 008; 1,003; 0.01 ; 1,123; 4,503; 120,05; 1432,002; 0,0034; 3 12481; 12,0001; 1,0101; 1 10 1; 0,0064; 124 0003; 3,1215926; 0,000384; 0,001004; 290,10003; 0,000072; 1,105507.
---	--

2. Հետևյալ թվերը գրեցեք տասնորդական կտորակով.  
ա) 13 ամբողջ 4 հարյուրերորդական, 7 հազարերորդական, 5 ամբողջ 312 ասանդարերորդական, 459 ասանդարերորդական, 63 ասանդարերորդական, 59 ամբողջ 8 ասանդարերորդական, 17 հարյուր հազարերորդական

բ) $\frac{7}{10}$	$\frac{3}{10\ 000}$	$\frac{42}{100\ 000}$	$\frac{2805}{100}$	$5 \frac{104}{10\ 000}$
$2 \frac{3}{100}$	$1 \frac{1}{100}$	$\frac{27}{10}$	$\frac{1209}{10}$	$1 \frac{5}{100\ 000}$
$5 \frac{37}{1000}$	$23 \frac{13}{10\ 000}$	$\frac{138}{100}$	$\frac{21}{1\ 000\ 000}$	$\frac{1735}{1\ 000\ 000}$
$\frac{21}{100}$	$1 \frac{37}{10\ 000}$	$\frac{1034}{1000}$	$10 \frac{2}{1000}$	$10 \frac{48}{100\ 000}$

գ) Հետևյալ թվերից յուրաքանչյուրի մեջ բնդամներ քանի՞ տասնորդական (հարյուրերորդական, հազարերորդական) մաս կա 5; 32; 157; 7,3; 14,3:

դ) Հետևյալ թվերից յուրաքանչյուրի մեջ բնդամներ քանի՞ հարյուրերորդական (հազարերորդական) մաս կա. . . 3); 14,25:

յ) Հետևյալ թվերից յուրաքանչյուրի մեջ քանի՞ հազարերորդական մաս կա. 5,063; 14,32; 7,4; 9; 12,6382; 0,0047:

3. ա) Գրեցե՛ք և կարդացե՛ք հետևյալ թվերից յուրաքանչյուրից 10 անգամ (100 անգամ, մեծ թիվը. 0,5; 3,2; 14,5; 0,32; 1,41; 2,5,37; 0,67; 14,01; 325,003; 0,459; 68,001; 100,01:

բ) Գրեցե՛ք և կարդացե՛ք հետևյալ թվերից յուրաքանչյուրից 10 անգամ (100 անգամ) փոքր թիվը. 365,7; 98,4; 47,38; 14,09; 3,5; 0,9; 0,14; 0,05:

գ) Հետևյալ թվերը մեծացրե՛ք.

- 1) 10 անգամ՝ 4,56; 0,368; 1,1; 2,7; 85,736
2) 100 անգամ՝ 7,14; 1,06; 12,3558; 456,1; 29,7; 34,1569
3) 1000 անգամ՝ 0,365; 4,29; 10,3815; 325,1; 14,05

4. Հետևյալ թվերը փոքրացրե՛ք.

- 1) 10 անգամ՝ 8,9; 4,73; 7; 15,6; 347,24; 125,6; 0,56
2) 100 անգամ՝ 8,6; 35,4; 10,38; 5,638; 1,01, 456,2; 1374,37
3) 1000 անգամ՝ 459,6; 37,28; 100,01; 1,56; 7,24; 0,365; 0,29, 0,04; 25,456; 138; 215,1; 1468,3; 24, 7; 0,1

5. 0,32; 0,14; 0,098 կոտորակներն արտահայտեցե՛ք հազարերորդական մասերով և ցույց տվե՛ք, թե նրացից զ՞մրն է ամենամեծը և զ՞որը ամենափոքրը:

6. Կարդացե՛ք 0,00043; 0,0043; 0,043; 0,43, 4,3 կոտորակները: Դրանցից զ՞մրն է ամենամեծը և զ՞մրը ամենափոքրը:

7. Կարդացե՛ք 0,07; 0,070; 0,0700; 0,07000 կոտորակները: Ի՞նչ կարելի յե ասել այդ կոտորակների մասին:

8. Հետևյալ կոտորակները դասավորեցե՛ք նրանց մեծության կարգով, սկսելով ամենամեծից. 0,25; 0,387; 0,362; 0,25908; 0,00489, 0,81; 0,7; 0,21 958; 0,7208; 0,8057:

9. 13 տարեկան տղայի միջին հասակը 1,481 մ է: Քանի՞ դեցիմետր է անուճ այդ քանի՞ սանտիմետր, քանի՞ միլիմետր:

10. 15 տարեկան տղայի միջին հասակը 1508 մմ է: Քանի՞ սանտիմետր է անուճ այդ քանի՞ դեցիմետր, քանի՞ մետր:

11. Կատարեցե՛ք հետևյալ բազմապատկումները (յերկու չեզանակով).

Table with 3 columns and 4 rows of multiplication problems: 1) 33,491 . 10, 2) 0,008 . 10, 3) 2,53 . 10 . 100, etc.

12. Գրեցե՛ք հետևյալ թվերից յուրաքանչյուրից 10 000 անգամ փոքր թիվը. 2185; 435; 92; 6; 1275,8; 15486,79; 0,8; 8,21; 1,0104; 0,149:

13. 1) 0,735-ը քանի՞ անգամ է փոքր 73,5-ից: 2) Քանի՞ անգամ 92,81-ը մեծ է 0,009281-ից:

14. Կատարեցե՛ք հետևյալ զործողությունները (յերկու չեզանակով).

Table with 3 columns and 4 rows of division problems: 1) 74,89 : 10, 2) 8,19 : 10, 3) 4,15 . 10 : 100, etc.

15. Արտահայտեցե՛ք մետրներով. ա) 36 սմ, 38 դմ, 25,9 սմ, 8 մմ, 17,84 մմ. բ) 5 կմ, 6 մմ, 17 կմ, 8,35 կմ, 242,9 սմ:

16. Կիլոգրամներով արտահայտեցե՛ք՝ 19 դգր, 357 գր, 24,4 գր, 0,8 գր, 5,1 ս, 0,3 ս-ը:

17. Տոններով արտահայտեցե՛ք. ա) 363,2 կգ-ը, բ) 3,687 կգ-ը, գ) 0,09 կգ-ը, դ) 9 կգ-ը:

18. Հեկտարներով արտահայտեցե՛ք. ա) 90 ար 75 ֆառ. մ-ը, բ) 347 ար 80 ֆառ. մ-ը, գ) 456,81 ար-ը:

19. Արտահայտեցե՛ք քառակուսի մետրնւրով. ա) 5,27 հա-ը, բ) 89,2 ար-ը, գ) 45,2 ֆառ. կմ-ը, դ) 0,56 հա-ը:

20. Չերվոնեցներով արտահայտեցե՛ք 235 ո. 60 կ.-ը, 3947 ո. 52 կ.-ը:

21. Վերածեցե՛ք ոտբլինների և կոպեկների. 46,875 չերվոնեցը, 13,84 չերվոնեցը:

22. Քանի՞ սանտիմետր է սլարոնակվում 43 կմ-ի մեջ, 3 կմ 76 մ-ի մեջ:

23. Քանի միլիմետր է պարունակվում 47 մ-ի մեջ, 5 մ 13 ս-ի մեջ;
24. Քանի մետր է պարունակվում 6 կմ 75 մ-ի մեջ;
25. Քանի կիլոգրամ է պարունակվում 44 ց-ի մեջ 5 ց 230 կգ-ի մեջ;
26. 23,5 զգր-ն արտահայտեցեք գրամներով;
27. 436 սգր-ը վերածեցեք միլիգրամներին;
28. 9,08 կգ-ն արտահայտեցեք գրամներով;
29. Քանի մետր կա 57 կմ-ի մեջ;
30. 28 5 դմ-ն արտահայտեցեք սանտիմետրներով;
31. Քանի քառակուսի մետր է պարունակվում 90 հա-ի մեջ;
32. 6 07 քառ. դմ-ն արտահայտեցեք քառակուսի սանտիմետրներով;
33. Քանի քառակուսի սանտիմետր է պարունակվում 314 քառ. մ-ի մեջ;
34. 98 4 հա-ն վերածեցեք քառակուսի մետրներին;
35. 4,715 հա մակերեսի մեջ քանի քառակուսի մետր կա;
36. Քանի խորանարդ զեցիմետր է պարունակվում 43 խոր. մ-ի մեջ;
37. 53 խոր. մ-ի մեջ քանի խորանարդ սանտիմետր կա;
38. 3,087 խոր. դմ-ն արտահայտեցեք խորանարդ սանտիմետրներով;
39. 5332 սմ-ի մեջ քանի մետր կա;
40. 283 300 սմ յերկարությունն արտահայտեցեք կիլոմետրներով մետրներով;
41. 9,551 սմ յերկարությունն արտահայտեցեք մետրներով և սանտիմետրներով;
42. 516 մմ յերկարությունը գրեցեք զեցիմետրներով, սանտիմետրներով;
43. Քանի կիլոգրամ է պարունակվում 3862 գր-ի մեջ;
44. 51826 գր կշիռն արտահայտեցեք կիլոգրամներով և գրամներով;
45. 35 262 կգ կշիռն արտահայտեցեք տոններով և կիլոգրամներով;
46. 4,5 հլ-ը վերածեցեք լիտրներին;

47. 9862 մ-ն արտահայտեցեք կիլոմետրներով, հեկտոմետրներով;
48. Քանի ար է պարունակվում 7500 քառ. մ-ի մեջ;
49. 38,4 հա-ը վերածեք արերին;
50. ա) 159 704 քառ. մ մակերեսն արտահայտեցեք հեկտարներով, արերով;
- բ) Քառակուսի ձև ունեցող հողամասի սահմանը հալասար է 460 մ: Քանի հեկտար է զբաղվում այդ հողամասը;
51. 7 856 292 խոր. սմ ծավալն արտահայտեցեք խորանարդ մետրներով և խորանարդ զեցիմետրներով;
52. Հեղուկի 5,028 խոր. մ-ի հալասար ծավալն արտահայտեցեք լիտրներով;
53. Ինչո՞ւ էի կարելի տասնորդական կտորակը 10, 100, 1000 անգամ մեծացնել, և ըստ կցադրելով 1, 2, 3 զերու Այդ զեպքում կտորակի ճեռ ի՞նչ է տեղի ունենում:
54. ա) Հազարերորդական մասերով արտահայտեցեք հետևյալ թվերը. 17; 3,5; 0,16; 0,01; 5,38;
- բ) Հետևյալ թվերն արտահայտեցեք նույնանուն մասերով. 1) 3,5; 6,73; 0,4; 12,86; 2) 15 6; 0,254; 4,32; 0,01;
- գ) Հետևյալ կտորակները բերեք ընդհանուր հայտարարի. ա) 0,739; 0,5; 8,214; 0,008106; բ) 1,34; 0,9; 15,6; 0,023; գ) 22,3; 0,14; 0,10084; 0,315021;
55. Հետևյալ կտորակները կրճ. տեցեք. 0,580; 3,200; 4,9000; 71,8040; 0,00000; 5 100

56. Գտե՛ք հետևյալ գումարները.

Տասնորդական կոստակների գումարումը	1) $100 + 10 + 1 + 0,1 + 0,01 + 0,001 + 0,0001$
	2) $3 + 0,01 + 0,0004$
	3) $0,3 + 0,008 + 0,00003$
	4) $40 + 0,6 + 0,0006$

- |                  |                          |
|------------------|--------------------------|
| 57. 4,81 + 0,607 | 58. 0,1 + 0,2 + 9 + 0,17 |
| 8,17 + 3,564     | 2,57 + 2 4 + 7,314       |
| 11,54 + 0 363    | 15,27 + 0,033 + 6,5      |
| 12,71 + 9,85     | 7 + 0,02 + 6,7998        |

59. Հետևյալ գումարն արտահայտեցեք մետրներով.  
34 դմ + 23,9 սմ:
60. Հետևյալ գումարն արտահայտեցեք սանտիմետրներով.  
29 մ + 57,29 սմ + 47 մմ:
61. Հետևյալ գումարն արտահայտեցեք միլիմետրներով.  
3,565 մ + 4,2 սմ + 0,3 կմ:
62. Հետևյալ գումարն արտահայտեցեք գրամներով.  
0,04 կգ + 39 գր:
63. Հետևյալ գումարն վերածեցեք կիլոգրամների.  
18 դկգ + 347 գր + 21 գր + 4,8 կգ:
64. Հետևյալ գումարն արտահայտեցեք տոններով.  
562,1 կգ + 0,09 կգ + 2 կգ + 832 գր:
65. Հետևյալ գումարն արտահայտեցեք արերով.  
81,75 ֆառ. մ + 327,80 ֆառ. մ + 326,6 ար:
66. Հետևյալ գումարն արտահայտեցեք քառակուսի մետրեր-  
ներով.  
3,27 հա + 87,2 ար + 45,2 ֆառ. կմ:
67. Հետևյալ գումարն արտահայտեցեք խորանարդ գեցի-  
մետրներով.  
5,7 խոր. մ + 0,04 խոր. մ + 41 խոր. սմ:
68. Հետևյալ գումարն արտահայտեցեք լիտրներով.  
0,23 հլ + 3,7 հլ + 72,54 հլ:
69. Գտեք Հետևյալ գումարները.
- |                         |                               |
|-------------------------|-------------------------------|
| 1) 1,23 + 4,56          | 5) 4,348 + 1,452 + 0,1        |
| 2) 2,31 + 3,16 + 4,52   | 6) 3,43 + 2,014 + 1,256       |
| 3) 0,37 + 7,402 + 0,005 | 7) 0,6335 + 0,246 + 2,3425    |
| 4) 6,27 + 4,45 + 9      | 8) 0,26 + 0,4 + 0,348 + 0,992 |

70. Գտեք հետևյալ գումարները.
- 1) 19,407 + 8,09 + 2,103 + 3,6
  - 2) 53,404 + 1 4342 + 0,05 + 5,5128
  - 3) 19,101 + 1 0035 + 1,79 + 0,12 + 5,1055
  - 4) 0,129 + 0,00497 + 0,85 703 + 1,000
71. Գտեք հետևյալ գումարները.
- 1) 0,2093 + 2 0605 + 4,00 802 + 6,90 047 + 1 82171
  - 2) 7,02006 + 2 80064 + 0,2901 + 1,00532 + 3,59448
  - 3) 0,08456 + 0,10023 + 0,00007 + 0,20904 + 0,60 7
72. Հետևյալ գումարն արտահայտեցեք կիլոգրամներով.  
0,057 ս + 6,43 կգ + 359,2 գր + 0,003 ս:
73. Հետևյալ գումարն արտահայտեցեք միլիմետրներով.  
4,8 սմ + 317,2 մմ + 4,8 մ:
74. Հետևյալ գումարն արտահայտեցեք կոպեկներով.  
6,4 չերվոնեց + 0,83 չերվոնեց + 4,5 ո. + 16 կ.:
75. 350-ին ավելացրեք նրա մեկ հարյուրերորդ մասը,  
ստացված գումարը փոքրացրեք 1000 անգամ և գտած արդյուն-  
քին ավելացրեք 1,645:
76. 3,14 159 թիվը գումարեցեք նրա մեկ տասերորդ և մեկ  
հարյուրերորդ մասի հետ և ստացված գումարը մեծացրեք  
0,5 128 351-ով:
77. Յերկու թվերի գումարը հավասար է (0,593 + 1,507)-ի,  
այդ թվերից մեկն 9 անգամ մեծ է մյուսից: Գտեք փոքր  
թիվը:
78. Յերկու թվերի գումարը հավասար է (3,5 + 0,39 +  
+ 0,31)-ի. այդ թվերից մեկը մյուսից 99 անգամ մեծ է: Գտեք  
փոքր թիվը:
79. Ստուգելու համար աշակերտը ջնջեց 256,74 գումարե-  
լին և, գումարելով մնացած գումարելիները ստացավ 7567,396:  
Գտեք ամբողջ գումարը:

80. 17, 6-ին ավելացրեք 283 ի մեկ տասերորդ մասի և 5,5-ի մեկ հարյուրերորդ մասի գումարը և ստացված գումարը մեծացրեք 100 անգամ:

81. Ինչքան պետք է լինի յերկաթի ձողի յերկարությունը, վոր նրանից հնարավոր լինի կարել 19,75 դմ, 17, 5 դմ, 12,54 դմ և 18,4 դմ յերկարություն ունեցող չորս կտոր և վորից հետո կտորտանք չմնա:

82. 12,2 մ խորություն ունեցող պետի մեջ մի ցից է խփված, վորը հողի մեջ է մտնում 2,26 մ և ջրի մակերևույթից դուրս է գալիս 1,5 մ: Ինչքան է ցցի յերկարությունը:

83. Տուրիստը 94 կմ գնաց վոտով, 895,6 կմ գնաց չերկաթուղով և 235 կմ էլ շողենավով: Ինչքան ճանապարհ գնաց այդ տուրիստը:

84. Կոոպերատիվում կա 3 կտոր մանուշակա առաջին կտորը 116,25 մ ի, յերկրորդը 17,25 մ-ով ավել է քան առաջինը, իսկ յերրորդը 0,5 մ-ով ավել է քան յերկրորդը: Քանի մետր մանուշակա այդ յերեք կտորի մեջ:

85. Ազատ ընկնող մարմինը իր անկման առաջին վայրկյանի ընթացքում անցնում է 4,9 մ, իսկ յուրաքանչյուր հաջորդ վայրկյանի ընթացքում 9,8 մ ավել, քան նախորդում: Քանի մետր կանցնի այդ մարմինը 3 վայրկյանի ընթացքում:

86. Գտեք այն քառանկյան պարագիծը, վորի մի կողմը հավասար է 16,4 մ-ի, յերկրորդը 2,01 մ-ով մեծ է առաջինից, յերրորդը 0,73 մ-ով մեծ է յերկրորդից և չրրորդը 1,54 մ-ով մեծ է յերրորդից:

87. Եեռանկյան կողմերի յերկարությունները հավասար են՝ 10,6 մ, 7,23 մ և 11,5 մ: Գտեք յեռանկյան պարագիծը:

Ինչքանով կմեծանա յեռանկյան պարագիծը, յեթե յուրաքանչյուր կողմը մեծացնենք 0,5 մ-ով, յեթե յուրաքանչյուր կողմը մեծացնենք 0,6 մ-ով:

88. Գտեք հետևյալ տարբերությունները.

- |              |                |
|--------------|----------------|
| 1) 6,8—3,5   | 5) 0,549—0,384 |
| 2) 0,59—0,27 | 6) 0,7—0,49    |
| 3) 0,92—0,4  | 7) 3,87—2,945  |
| 4) 0,575—0,2 | 8) 2,15—1,579  |

Ցասնորդական  
կոսոսակճե: ի  
համումը

- |                |             |
|----------------|-------------|
| 9) 0,8—0,125   | 11) 3—0,93  |
| 10) 19,8—0,948 | 12) 5—2,556 |

99. Գտեք հետևյալ տարբերությունները և ստուգեք արդյունքները.

- |               |                  |
|---------------|------------------|
| 1) 15,32—4,14 | 6) 19,435—19 039 |
| 2) 34,5—16,32 | 7) 7,25—6,893    |
| 3) 45—10,15   | 8) 1—0,534       |
| 4) 0,2—0,193  | 9) 17,32—9       |
| 5) 125—124,93 | 10) 21,04—13     |

99. Գտեք հետևյալ տարբերությունները.

- |                     |                    |                 |
|---------------------|--------------------|-----------------|
| 1) 9,391—4 536      | 4) 4,9—3,295       | 7) 19—18,62     |
| 2) 9,234—5,679      | 5) 5,32—4,885      | 8) 100—94,125   |
| 3) 8,5—1,34         | 6) 2—0,7           | 9) 23,01—19,478 |
| 10, 12—3,1—0,56—0,1 | 11) 23—4,9—5,7—6,8 |                 |

91. Գտեք հետևյալ տարբերությունները.

- |                             |
|-----------------------------|
| 1) 11—(5—0,45)              |
| 2) (18—9,46)—7,65           |
| 3) (6,1—2,34)—2,67          |
| 4) (34—19,05)—(13—7,065)    |
| 5) (1—0,156)—(0,72—0,376)   |
| 6) (7,563—5,409)—(11—9,246) |
| 7) (8,731—0,78)—(8,8—3,057) |

92. Կատարեք նշված գործողությունները.

- |                         |
|-------------------------|
| 1) 6,2+0,43—(5,14+0,09) |
| 2) 13,8+9,1—(5,9—3,8)   |
| 3) 8,4—3,3—(5,1—4,8)    |
| 4) 43—19,05—(13—7,06)   |

5)  $1 - 0,156 - (0,72 - 0,376)$

6)  $49,8 + 13,1 + 6 - (17,1 + 2,56)$

7)  $4,4 + 7 + 11,32 - (8,42 - 5,7)$

8)  $5,93 + 1,99 + (4,1 - 2,7) - (5,83 - 4,97)$

9)  $2,8 + 3 + 5,2 + (4,7 - 1,5) - (9,6 - 3,85)$

10)  $5,92 - 4,8 - (34,2 - 34,16) + (2,7 + 1 + 0,05)$

11)  $12 - (0,2 + 3,28 + 6,78 - 1,2) + (3,9 - 2,7)$

12)  $12 + (14,2 - 6,28) + (3,33 - 2,23) - (4 - 2,6)$

13) Հետևյալ գործողութիւնների արդյունքն արտահայտեցէք կոպեկներով.

8,4 չիւրվոնեց + 0,83 չիւրվոնեց - 4,5 ու. - 18 կ.

93. Կատարեցէք նշված գործողութիւնները.

1)  $20 - 5 + 0,0007 - 0,8 + 0,195$

2)  $20 - (5 + 0,0007 - 0,8 + 0,195)$

3)  $20 - (5 + 0,0007) - (0,8 + 0,195)$

4)  $30 - (5 + 0,0007 - 0,8) + 0,195$

94. Կատարեցէք նշված գործողութիւնները.

1)  $(13,1 - 9,25) - (4,9 - 3,15)$

2)  $(1,1 + 9,73 - 3,635) + (2,8 - 1,495)$

3)  $(10 - 3,745) - (0,9 + 0,855)$

4)  $(1 - 0,456) + (3,5 - 1,144) - (1,137 - 0,883)$

95. Կատարեցէք նշված գործողութիւնները.

1)  $54,03 - [13,321 - (17,481 - 14,16)]$

2)  $(100,1 - 59,37) - (14,27 - 4,93 - 6,75)$

3)  $[(4 - 0,786) + (6 - 2,214)] - [3,93 + 2,703 - (1 - 0,567)]$

96. Կատարեցէք նշված գործողութիւնները.

1)  $[(16,18 - 7,243) + (30 - 21,4)] - (0,017 - 0,00117 - 0,00086)$

2)  $[(6,007 - 2,89) + (2,61 - 0,964)] - 4,603 - (0,15 - 0,084)$

3)  $(5,002 + 1,0004) - 3,0484 - [(5,7 - 4,8141) - 0,0059]$

4)  $9,0007 - (0,519 + 1,8743) - [0,15 + 1,763] - (3,63 - 2,164)$

97. Գտեք, թե հետևյալ սրինակների մեջ ինչից յետո՞ւ է սարքը:

1)  $x + 0,25 = 4,3$

6)  $8,2 - x = 5,45$

2)  $10,5 + x = 18$

7)  $20 - x = 12,3$

3)  $4,75 + x + 5,02 = 24,1$

8)  $x - (4,6 - 0,9) = 10$

4)  $x - 0,39 = 4,31$

9)  $(18 - 3,6) + x = 15,4$

5)  $x - 12,905 = 7,095$

10)  $(33,3 + 66,6) - x = 90$

98. Ի՞նչ թիվ պետք է ավելացնել 2,5-ին, վոր ստացվի 25:

99. Վճր թվին պետք է ավելացնել 9,9, վոր ստացվի 20:

100. Վճր թվից պետք է հանել 5,5, վոր ստացվի 5: Վճր թիվը 11,38-ից փոքր է 1,99-ով:

101. Յերկու գումարելիներից մեկը հավասար է 50,98-ի, նրանց գումարը հավասար է 120,44-ի: Գտեք յերկրորդ գումարելին:

102. Յերեք թվերի գումարից ստացվեց 98,7. գումարելիներից մեկը 12,5 է, մյուսը՝ 7,89: Ինչից յետո՞ւ է հավասար յերրորդ գումարելին:

103. Նվազեցնել հավասար է 61,9-ի, տարբերութիւնը՝ 25,37-ի: Գտեք հանելին:

104. Ի՞նչ փոփոխութիւն է լինթարկվում գումարը, յետո՞ւ է մի գումարելին փոքրացնում ենք 7,5-ով, իսկ մյուսը՝ 5,4-ով:

Ստուգեցէք վորեւէ որինակով:

105. Ի՞նչ փոփոխութիւն կկրի գումարը, յետո՞ւ է գումարելիներից մեկը մեծացնենք 8,6-ով, իսկ մյուսը փոքրացնենք 12,3-ով: Ստուգեցէք վորեւէ որինակով:

105. Ինչպե՞ս և փոփոխվում տարրերու թյունը՝  
 1) յեթև նվազելին մեծացնում ենք 92,7-ով. յեթև նվազելին փոքրացնում ենք 34,5-ով.  
 2) յեթև հանելին մեծացնում ենք 32,11-ով փոքրացնում ենք 23, 5-ով.  
 3) յեթև նվազելին ու հանելին փոքրացնում ենք 0, 1-ով. մեծացնում ենք 0, 1-ով.  
 4) յեթև նվազելին մեծացնում ենք 0, 1-ով, իսկ հանելին փոքրացնում ենք 0.1-ով.  
 5) յեթև նվազելին փոքրացնում ենք 1,75-ով, իսկ հանելին մեծացնում ենք 1,75-ով.
107. 3,2 — ,935 տարրերու թյունը փոքրացրեք 100 անգամ:
108. 5,3-ի մեկ հարյուրերորդ մասից հանեցեք 0,002 կոտորակի տասնապատիկը և տարբերությունն արելացրեք 7, 1: Ի՞նչ կստացվի:
109. Գտեք այնպիսի մի թիվ, վորը մեծացնելով 100 անգամ և արտադրյալին գումարելով 3,2, ստացվի 256,7:
110. Ի՞նչ փոփոխություն կիրի տարրերու թյունը, յեթև նվազելին ավելացնենք, իսկ հանելից հանենք 0 12:
111. Ի՞նչ փոփոխություն կենթարկվի տարրերու թյունը, յեթև նվազելին ավելացնենք 2,5 և հանելին՝ 0,7:
112. Գտեք այն թիվը, վորը 2,5 ից այնքանով մեծ լինի, վորքանով 5 7-ը մեծ է 2,39-ից:
113. Յերկու թվերի տարրերու թյունը հավասար է 0,756 ի. Ինչի՞ հավասար կլինի այդ տարբերությունը, յեթև նվազելին մեծացնենք 5,3-ով, իսկ հանելին փոքրացնենք 0,9-ով:
114. Գտեք այն թիվը, վորը 9,07-ից փոքր լինի այնքանով, վորքանով 99,78-ը փոքր է 100 1-ից:
115. Մի դաշտի յերկարությունը հավասար է 198,5 մ-ի, իսկ մյուս դաշտի յերկարությունը՝ 2173,4 մ-ի: Առաջին դաշտը յերկրորդից ինչքանով է կարճ:
116. Բուրեղի արկղի վրա կա հեռեյալ մակագրությունը՝ բրուտո 49,183 կգ, սարան 1,796 կգ: Վորոշեցեք նեատո կշիռը:
117. Մի գնացք հասավ մյուսին: Առաջինը մեկ ժամում

անցնում է 34,76 կմ, իսկ յերկրորդը՝ 29,79 կմ: Իրարից Ի՞նչ հեռավորության վրա էլին զանազան արդ գնացքները զրանից մեկ ժամ առաջ:

118. Դեղին պղինձ (լատուն) պատրաստելու համար ձուլեցին 4,85 կգ կարմիր պղինձ, 2275 սգ ցինկ և 2,1 կգ կապար: Ձուլելու ժամանակ 2215 գր մետաղի հալախորուտ տեղի ունեցավ: Վորոշեցեք լատունի ստացված ձուլվածքի կշիռը:

119. 9 35 մ յերկարություն ունեցող պարանից հաջորդաբար կտրեցին՝ 2,35 մ; 3,7 մ; 1 մ: Ի՞նչ յերկարություն պարան մնաց: (Լուծեցեք յերկու յեղանակով):

120. 7,35 մ յերկարություն ունեցող ուղիք բաժանեցին յերկու մասի: Մի մասի յերկարությունը հավասար է 2,89 մ-ի: Թեև յերկրորդ կտորը ինչքանով է յերկար առաջինից:

121. 8,14 մ յեր, արություն ունեցող ուղիք յերկու մասի բաժանեցին, վորոշից մեկը մյուսից 0,96 մ-ով յերկար է: Վորոշեցեք յուրաքանչյուր մասի յերկարությունը:

122. Մի արկղ ապրանքը կշռում է 264,4 կգ: Այդ արկղից նախ վաճառեցին 25,9 կգ, հետո 10,8 կգ, և 54 կգ, վորից հետո արկղում մնաց 161,9 կգ ապրանք: Վորոշեցեք դատարկ արկղի կշիռը (տարան):

123. Առաջին անգամ աղացին 58,6 կգ հաճար, յե կրորդ անգամ՝ 160,4 կգ, յերրորդ անգամ՝ 132,7 կգ: Աղալուց հետո ստացվեց ընդամենը 235,5 կգ ալյուր և 102,9 կգ թեփ: Ինչքան պակասեց կշիռը:

124. Վորոշեցեք յերկարություն հնգանիստ մեջ կամրջի ընդհանուր յերկարությունը, յեթև յերեք միջին հենամեջերից յուրաքանչյուրի յերկարությունը հավասար է 74,6 մ-ի, իսկ յերկու ծայրահենամեջերից յուրաքանչյուրը կարճ է 10,6 մ-ով:

125. Հացի փուռն առաջին օրը ծախսեց 4,25 ս ալյուր, յերկրորդ օրը՝ 1,75 ս պակաս, քան առաջին օրը, իսկ յերրորդ օրը՝ 2,39 ս պակաս. քան առաջին և յերկրորդ օրերը միասին: Այդ յերեք օրվա ընթացքում ինչքան ալյուր ծախսվեց:

126. 61,1 մ մետաղալարը 4 մասի բաժանեցին, առաջին մասի յերկարությունը հավասար է 29,47 մ-ի, յերկրորդը 10 անգամ և յերրորդը 8,62 մ-ով կարճ է առաջինից: Գտեք յերրորդ մասի յերկարությունը:

127. Աշակերտը 0,9 ուղարկվ գնեց մի գիրքը և թուղթ, ընդ-  
վորում գրքին 9 անգամ ավել վճարեց, քան թղթին: Ինչքան  
արժեք գիրքը և ինչքան թուղթը:

Տասնորդական կր-  
տարակների բազ-  
մապատկումը

կատարեցեք նշված գործողությունները.

128. 1) 12,35 . 10      5) 0,25 . 2; 0,25 . 1  
2) 0,07324 . 100    6) 4,5 . 5  
3) 0,03784 . 1000    7) 0,43 . 35  
4) 0,648 . 10 000    8) 1,35 . 48  
9) 1,15 . 60          11) 0,0354 . 25      13) 0,4357 . 5000  
10) 2,34 . 48        12) 1,03 . 200        14) 0,0024 . 1225
129. 1) 3 . 4,2          6) 7 . 0,18          11) 14 . 0,365  
2) 5 . 25,4          7) 15 . 2,34        12) 21 . 0,304  
3) 14 . 17,35        8) 600 . 7,1324    13) 46 . 1,05  
4) 25 . 0,324        9) 16 . 0,25        14) 54 . 2,007  
5) 400 . 5,187      10) 200 . 0,14      15) 49 . 3,008
130. 1) 5,2 . 1,2        6) 15,2 . 0,003    11) 17,007 . 4,03  
2) 1,2 . 1,4          7) 0,07 . 15,25    12) 0,0149 . 5,08  
3) 1,6 . 0,25        8) 0,156 . 1,7     13) 6,8 . 0,93  
4) 7,5 . 0,014       9) 16,15 . 0,08    14) 0,991 . 0,89  
5) 1,01 . 2,04       10) 0,0105 . 2,04   15) 1,086 . 0,993
131. 1) 0,017 . 2,5 . 0,8      6) 8 . 0,604 . 125  
2) 1,2 . 0,25 . 1,4        7) 6,07 . 0,305 . 8,4  
3) 1,125 . 7,6 . 0,01      8) 3,75 . 18 . 0,06 . 1,5  
4) 125,4 . 0,015 . 4,8    9) 4,08 . 23 . 2,09 . 2,1  
5) 0,4 . 0,5 . 0,25        10) 0,09 . 3,07 . 12,85 . 0,105

132. 1)  $0,05 \cdot 100 \cdot 0,44 + 0,25 \cdot 12,4$   
2)  $3,14 \cdot 1,05 + 0,05 \cdot 34,06$   
3)  $(3,6 \cdot 0,4 + 2,24 \cdot 2,5) \cdot 0,1$   
4)  $(1 - 0,2) \cdot (3 - 2,68) + 1,2 \cdot 0,12$   
5)  $1,28 \cdot 1,25 - 0,95 \cdot 0,64$   
6)  $3,59 - 0,01 \cdot 0,2$   
7)  $(9,68 - 11,9) \cdot 0,01 + 3,02 \cdot 10,01$   
8)  $15,25 - 3,1 \cdot 0,6 + 10$
133. 1)  $(4,8475 + 4,5275) \cdot (4,8475 - 4,5275)$   
2)  $(3,1 - 1,85) \cdot (1,2 - 1,12) + (10 - 1,4) \cdot (12,1 - 10,6)$   
3)  $(235,4 - 190,7) \cdot (2,1 - 1,6) + 3,264 \cdot (16 - 13,5)$   
4)  $(1,5 + 0,95 + 0,001) \cdot (14,3 + 0,73 + 6,97) + (17 - 15,4)$

134. Հետևյալ բազմապատկումները կատարեցեք մտավոր.
- |            |             |              |            |             |
|------------|-------------|--------------|------------|-------------|
| 0,5 . 10   | 0,396 . 100 | 10 . 0,25    | 2 . 0,01   | 0,01 . 0,1  |
| 1,4 . 10   | 0,7 . 100   | 10 . 22,4    | 2 . 0,001  | 0,001 . 0,1 |
| 0,75 . 10  | 0,6 . 20    | 100 . 0,25   | 2 . 0,0001 | 0,5 . 0,1   |
| 0,4 . 2    | 0,8 . 50    | 100 . 0,517  | 7 . 0,3    | 0,05 . 0,1  |
| 0,5 . 13   | 0,4 . 80    | 100 . 1,19   | 8 . 0,5    | 0,005 . 0,1 |
| 0,25 . 5   | 10 . 0,8    | 1000 . 0,375 | 12 . 0,4   | 1,4 . 0,5   |
| 0,17 . 100 | 10 . 4,25   | 2 . 0,1      | 0,1 . 0,1  | 0,25 . 1,6  |

135. Գտե՛ք՝

- |                  |      |                 |      |
|------------------|------|-----------------|------|
| 1) 14,2-ի 0,056  | մասը | 7) 17,34-ի 0,98 | մասը |
| 2) 1,15-ի 0,31   | »    | 8) 43-ի 0,75    | »    |
| 3) 25,407-ի 0,69 | »    | 9) 30,06-ի 0,72 | »    |
| 4) 195-ի 0,8     | »    | 10) 200-ի 0,3   | »    |
| 5) 213,64 0,175  | »    | 11) 56-ի 0,7    | »    |
| 6) 0,4-ի 0,33    | »    | 12) 315-ի 0,25  | »    |

135. Գտեք ինչի՞նչ յե հավասար  $x \cdot e$ .

1)  $x : 0,3 = 24,5$

5)  $x : 0,5 = 0,001$

2)  $x : 2 = 49,53$

6)  $x : 0,01 = 35,28$

3)  $x : 1,3 = 0,027$

7)  $x : 1,8 = 2,12$

4)  $x : 200 = 0,403$

8)  $x : 0,1 = 0,01$

137. Ի՞նչ փոփոխություն կենթարկվի արտադրյալը, յեթե արտադրիչներին մեկը բազմապատկենք 2,5-ով, իսկ մյուսը՝ 6,4-ով. մի արտադրիչը մեծացնենք 1,2 անգամ, իսկ մյուսը՝ 2,5 անգամ:

138. Գտեք այն թիվը, վորը բաժանվելով 3,456-ի վրա, քանորդում տա 7,89:

139. Վճր թվին պետք է ավելացնել 27,31, վոր ստանանք 18,4-ից 3,5 անգամ մեծ թիվը:

140. Վճր թվի մեջ 5,13-ը պարունակվում է 2,4 անգամ:

141. ա) 9,64-ը մեծացրեք 3,5 անգամ:

բ) Գտեք թե զիտողից քանի կիլոմետրի վրա յեն գտնվում ամպրոպային ամպերը, յեթե նա վերտոը կայծակը խփելուց 4 վրջ հետո լսվեց: Չայնի արագությունը մեկ վայրկյանում հավասար է 333,3 մ-ի, լույսի տարածվելը տվյալ զեպքում կարելի յե ակնթարթային համարել:

դ) Յերկաթե ձողը խառատի դազգյաճի վրա ճախարակելիս կտրիչը մեկ բողբոջում անցնում է 2,1 սմ: 5 բողբոջ հետո կտրիչն անցավ ձողի ամբողջ յերկարությունը: Վորոշեցեք ձողի յերկարությունը:

142. Վճր թիվը 9,7-ից մեծ է 8,3 անգամ:

143. Ապրանքի նետառկիցը հավասար է 3745 ց-ի: Տարան կազմում է ամբողջ ապրանքի կշռի 0,3 մասը: Վորոշեցեք բրուտտո կշռը:

144. ա) Առաջին տեսակի մանուզի մեկ մետրն արժե 13,6 ու., իսկ յերկրորդ տեսակինը՝ 2,8 ուրբով եժան է: Ընդամենը ինչքան պետք է վճարել 9,75 մ առաջին տեսակի և 10,25 մ յերկրորդ տեսակի մանուզին:

բ) Կրավականայնի արդյոք զնված ուղեգրից յերեք միջանցքի նտաղը ծածկելու համար, յեթե այդ միջանցքների յեր-

կարությունները հավասար են՝ 27,4 մ, 25,8 մ և 13,7 մ, և յեթե զնված է 2 կտոր ուղեգրի յարաքանչյուրը 12,6 մ յերկարությունսար և 2 կտոր ել՝ յարաքանչյուրը 14,6 մ: Յեթե չի բավականացնում, ապա ասացեք, քանի՞ մետր է պակասում (կտրացրած):

145. Գնված է 10,8 կգ ժածիկ, կիլոգրամը 4,55 ուրբով, 11,4 կգ. կիլոգրամը 3,15 ուրբով և 7,6 կգ. կիլոգրամը 1,5 ուրբով: Այդ ամբողջին ինչքան է վճարվել:

146. Շոգեքարը կշռում է 52,28 ց, տեղերը՝ 32,47 ց, իսկ յուրաքանչյուր բարձած վազոնը՝ 22,45 ց: Վորոշեցեք ամբողջ գնացքի կշռը, յեթե նրա կազմի մեջ մտնում է 29 բարձած վազոն:

147. 8,76 մ յերկարություն ունեցող ուղից կարեցին նրա ամբողջ յերկարության 0,45 մասին հավասար մի կտոր: Վերջեցեք կտրած և մնացած մասերի կշռները, յեթե ուղի մեկ մետր յերկարություն ունեցող կտորը կշռում է 30,2 կգ:

148. Մեկն ունեք 67,5 ու.: Այդ փողի 0,12 մասը նա ծախսեց զրքի համար, 0,16 մասը տվեց թղթի և 0,1 մասը մատիտի: Ինչքան փող մնաց նրա մոտ:

149. Չրամբարն ունի յերկու խողովակ. առաջին խողովակով մեկ բողբոջում լցվում է 2,35 դուլլ. յերկրորդով լցվում է առաջինով լցվող ջրի քանակության 0,4 մասը. յերկու խողովակներով ջրամբարը լցվում է 8 ժամ 20 բողբոջում: Քանի՞ դուլլ ջուր է տանում այդ ջրամբարը:

150. A և B յերկու կայարաններից միաժամանակ իրար հանդեպ դուրս յեկան յերկու գնացք, մեկը ժամում 35,4 կմ արագությամբ, իսկ մյուսը՝ 32,6 կմ: Նրանց հանդիպումը տեղի ունեցավ մեկնելուց 0,9 ժամ հետո: Վորոշեցեք այդ կայարանների հտավորությունը:

151. Սենյակը 5,75 մ յերկարություն և 5 մ լայնություն ունեցող ուղղանկյան ձև ունի: Ինչի՞նչ յե հավասար սենյակի մակերեսը:

Ստանց գործողությունը կտարելու ասացեք, քանի՞ անգամ մեծ կլինի այն սենյակի մակերեսը, վորի լայնությունը 4,5 անգամ մեծ է տվածից. յերկարությունը 3,5 անգամ մեծ է տվածից:

152. Քառակուսու կողմը հավասար է 29,17 մ-ի: Գտեք նրա պարագիծը:

153. Քառակուսու կողմը հավասար է 0,59 մ-ի: Գտեք նրա մակերեսը:

154. ա) Ուղղանկյան հիմքը 9,4 սմ է, բարձրությունը կազմում է հիմքի 0,7 մասը: Գտեք ուղղանկյան մակերեսը:

բ) 12,5 սմ է 19 5 սմ կողմերն ունեցող ուղղանկյան մակերեսն ինչքանով է տարբերվում այդ ուղղանկյան մեծ կողմին հավասար կողմ ունեցող քառակուսու մակերեսից:

գ) 0,78 մ  $\times$  0,65 մ չափսերն ունեցող ապակուց կտրեցին 0,35 մ  $\times$  0,28 մ չափսերն ունեցող 4 ապակի, 0,8 մ  $\times$  0,08 մ չափսերն ունեցող 2 ապակի և 0,35 մ  $\times$  0,1 մ չափսերն ունեցող 2 ապակի: Հաշվեցե՛ք մնացած ապակու մակերեսը:

155. ա) Հաշվեցե՛ք ուղղանկյան ձև ունեցող հողամասի մակերեսն արհրով, յեթե նրա յերկարությունը հավասար է 1, 72 կմ-ի, իսկ լայնությունը՝ 0,34 կմ-ի:

բ) Պլանի վրա 100 մ = 1 սմ մասշտաբով 5 սմ է 4 սմ կողմերն ունեցող ուղղանկյունը պատկերացնում է մի հողամաս: Քանի՞ ար է այդ հողամասը:

156. Վորոշեցե՛ք ուղղանկյան ձև ունեցող բանջարանոցի մակերեսը, յեթե նրա լայնությունը հավասար է 13,4 մ-ի, իսկ յերկարությունը չորս անգամ մեծ է:

157. Հաշվեցե՛ք (արերով) ուղղանկյան ձև ունեցող հողամասի մակերեսը, յեթե նրա յերկարությունը հավասար է 516 մ-ի, իսկ լայնությունը՝ 370 մ-ի:

158. Գյուղացի պեռք է ցանկապատի իր հողամասը, վորի յերկարությունը հավասար է 179 մ-ի, լայնությունը՝ 32,5 մ-ի: Քանի՞ ցից է պահանջվում այդ ցանկապատի համար, յեթե յուրաքանչյուր մետրի համար պեռք է 4 ցից:

159. ա) Բնակարանը 3 սենյակ ունի: Առաջին սենյակի չափսերն են՝ 5,6 մ  $\times$  4,7 մ, յերկրորդի չափսերը՝ 4,8 մ  $\times$  4,2 մ, իսկ յերրորդի չափսերը՝ 5,2 մ  $\times$  4,5 մ: Ամսական ինչքան բնակավարձ պեռք է վճարվի, յեթե 1 քառ. մ-ի համար դանձում են 44 կոպ.: (Լուծեցե՛ք յերկու յեղանակով):

բ) Ինչքան պեռք է վճարել սենյակի պատերն ու առաստաղը սպիտակացնելու համար, յեթե այդ սենյակի յերկարու-

թյունը հավասար է 6,5 մ-ի, լայնությունը՝ 5,5 մ-ի և բարձրությունը՝ 4,5 մ-ի է յեթե 1 քառ. մ սպիտակացնելու համար պեռք է վճարել 44 կ.:

գ) Ինչի՞ յե հավասար ուղղանկյան ձև ունեցող տունը շրջապատող ցանկապատի յերկարությունը, յեթե տան յերկարությունը հավասար է 33,5 մ-ի, լայնությունը՝ 12,5 մ է յե յեթե ցանկապատը անից 9 մ հեռավորության վրա յե դռնվում:

160. Գտե՛ք շրջանագծի յերկարությունը, յեթե շառավիղը հավասար է 7,6 մ-ի: (Շրջանագծի յերկարությունը 3,14 անգամ մեծ է տրամագծից):

161. Անիվի տրամագիծը 0,8 մ է: Շինի համար ինչ յերկարություն յերկաթաշերտ պեռք է վերցնել, յեթե յեռման համար պեռք է թողնել 10 սմ:

162. Հիծանվի անիվի տրամագիծը 0,63 մ է: Փանի՞ մետր կանցնի այդ հիծանիվը, յեթե նրա անիվը 4500 պտույտ գործի:

163. Հաշվեցե՛ք այն շրջանի մակերեսը, վորի շառավիղը հավասար է 13,4 սմ-ի: (Շրջանի մակերեսը հավասար է կիսաշրջանագծի յերկարությունը բազմապատկած շառավիղով):

164. Ինչի՞ յե հավասար այն շրջանի մակերեսը, վորի տրամագիծը հավասար է 6,3 սմ-ի:

165. Խորանարդի կողը հավասար է 0, 5 դմ-ի: Գտե՛ք այդ յուրանարդի ծավալը:

166. Գտե՛ք ուղիղ պրիզմայի ծավալը, յեթե նրա հիմքը 3,1 սմ-ի հավասար կողմ ունեցող քառակուսի յե, իսկ բարձրությունը հավասար է 4,9 սմ-ի:

167. Ինչքան է կշռում 16,250 խոբ. մ կաղնի անտառը, յեթե կաղնու տեսակարար կշիռը հավասար է 0 85-ի:

168. Վորոշեցե՛ք 14,5 խոբ. մ քարածխի կշիռը, յեթե նրա տեսակարար կշիռը հավասար է 1,3-ի:

169. Քարածուխը բառնում են 6,4 մ յերկարություն, 2,74 մ լայնություն և 0,76 մ բարձրություն ունեցող վադոնի մեջ: Քանի՞ տոնն քարածուխ կտեղավորվի այդ վադոնում, յեթե քարածխի տեսակարար կշիռը հավասար է 1,3-ի:

170. Հաստոցային գնդացրի ժապավենը պարունակում է 250 փամփուշտ: Ժապավենը պահում են տուփի մեջ: Ինչքան է կշռում տուփը գնդացրային ժապավենի հետ միասին, յեթե

յուրաքանչյուր ինքնուրուի կտրում է 22,5 գր, դատարկ ժապա-  
 գանք՝ 0,7 կգ և առավել՝ 1,2 գր:

Տասնորդական կո-  
 ստանկցների բաժա-  
 ցումը

Կատարեցե՛ք նշված գործողութիւնները.

171. 1) 3,6 : 10                      6) 25,7 : 1000  
 2) 97,4 : 100                      7) 5,1 : 1000  
 3) 128,5 : 1000                    8) 0,64 : 1000  
 4) 0,4 : 100                        9) 0,017 : 1000  
 5) 3,89 : 1000                    10) 0,405 : 1000
172. 1) 83 : 10                    3) 275 : 1 0                    5) 18 000 : 1000  
 2) 4 : 10                        4) 61 : 100                    6) 576 : 1000
173. 1) 6,9 : 3                    4) 57,5 : 5                    7) 7,9 : 316                    10) 3,6 : 225  
 2) 1,75 : 7                    5) 13,2 : 24                    8) 0,06 : 15                    11) 8,01 : 9  
 3) 0,48 : 6                    6) 0,7 : 25                    9) 11,9 : 14                    12) 61,62 : 158

Կատարեցե՛ք գործողութիւնները (և ստուգեցե՛ք պատաս-  
 խանները).

174. 1) 6 : 0,8                    4) 34 : 0,085                    7) 89 : 0,02848                    10) 11 : 0,032  
 2) 1 : 0,05                    5) 160 : 0,016                    8) 24 : 6,25                    11) 225 : 0,625  
 3) 9 : 0,36                    6) 19 : 0,0608                    9) 32 : 1,28                    12) 4 : 0,0025
175. 1) 0,75 : 0,15                    4) 1,72992 : 0,01088                    7) 235,2 : 0,042  
 2) 1,836 : 0,204                    5) 0,12369 : 0,00093                    8) 0,2091 : 4,1  
 3) 12,4 : 0,031                    6) 598,27 : 0,2063                    9) 519,536 : 15,2

Կատարեցե՛ք նշված գործողութիւնները.

176. 1) 0,21 : 0,84                    6) 25,9 : 3,7                    11) 21,875 : 3,125  
 2) 0,19 : 0,95                    7) 1,75 : 1,4                    12) 183,96 : 10,512  
 3) 3,76 : 0,4                    8) 18,4 : 7,36                    13) 4,5 : 0,1  
 4) 7,05 : 1,5                    9) 16,92 : 4,23                    14) 7,8 : 0,01  
 5) 3,5 : 0,04                    10) 86,1 : 2,46                    15) 13,4 : 0,01

177. 1) 0,6 : 2,7                    4) 0,0781 : 0,2343                    7) 138 : 0,15  
 2) 0,8 : 1,44                    5) 5 : 22,5                    8) 3,55 : 17,75  
 3) 1,25 : 2,8125                    6) 140 : 0,45                    9) 0,44 : 0,88

178. Հետևյալ բաժանումները կատարեցե՛ք բանալոր.

- 1) 7,6 : 2                    6) 8 : 0,4                    11) 8,2 : 4,1                    16) 6,6 : 0,06  
 2) 6,3 : 3                    7) 10 : 0,5                    12) 17,5 : 3,5                    17) 10,15 : 0,5  
 3) 0,8 : 4                    8) 18 : 0,9                    13) 90 : 4,5                    18) 3,5 : 0,05  
 4) 1,8 : 6                    9) 64 : 3,2                    14) 7,7 : 0,11                    19) 18,6 : 0,004  
 5) 1,4 : 7                    10) 49 : 0,7                    15) 7,49 : 7                    20) 10 : 0,25

Կատարեցե՛ք նշված գործողութիւնները.

179. 1) 0,25 : 4 + 15,3 : 5 + 12,4 : 8 + 0,15 : 30  
 2) 96,7 : 10 + 0,045 : 5 + 140,4 : 12 + 1,53 : 15  
 3) 4,912 : 16 + (18,305 : 7 - 0,036 : 4)  
 4) 72,492 : 12 + 78,156 : 36 - 120,03 : 15
180. 1) 15,2 : 1,9 + 0,51 : 0,17 + 0,48 : 0,08  
 2) 5 : 4 - 4 : 5 + 0,5 : 0,4 - 0,4 : 0,5  
 3) 1,98 : 0,11 + 0,68 : 0,17 + 7,8 : 1,3  
 4) 3,41 : 1,1 + 2,04 : 1,7 + 1,488 : 1,24
181. 1) (15 : 1,2) · (7 : 1,4) - (1 : 2,5) · (3 : 1,2)  
 2) (1 : 1,6) · (26 : 5,2) + (18 : 3,6) · (2 : 0,25)  
 3) 0,063 : 0,09 + 0,0108 : 0,017 + 0,00027 : 0,015
182. 1) 28,07 : 1,4 + 27,75 : 11,1 - 19,76 : 15,2  
 2) 17,102 : 3,4 - 2,472 : 2,4 + 20,503 : 2,9  
 3) 0,1 : 0,002 - (7,91 : 0,565 - 11,1 : 1,48)
183. 1) (1,14 + 0,76) : (1,14 - 0,76) + 0,054 : 0,012  
 2) (0,6 + 0,36) : (0,6 - 0,36)  
 3) (28,7 · 0,15) : (0,25 · 0,21) + 22,5 : 1,25

134. Հիտեյալ որինակաների մեջ վորոշեցեք x-ը.

- 1)  $x : 3 = 14,56$     5)  $12,5 : x = 0,04$     9)  $0,3 : 5 : x = 0,25$   
 2)  $x : 0,2 = 7,1$     6)  $12,5 : x = 0,625$     10)  $35 : 53 : x = 5,225$   
 3)  $15 : x = 3,75$     7)  $41,6 : x = 6,4$     11)  $42,4 : x = 0,04$   
 4)  $1 : x = 0,25$     8)  $0,19 : x = 0,95$     12)  $6,437 : x = 2,05$

135. Հետեյալ հավասարութունները վորոշեցեք x-ը.

- 1)  $x \cdot 17 = 15,3$     4)  $5x \cdot 345 = 2,484$     7)  $1,44 \cdot x = 57,6$   
 2)  $46 \cdot x = 18,4$     5)  $0,7 \cdot x = 5,614$     8)  $1,15 \cdot x = 0,92$   
 3)  $2x \cdot 4 = 14,4$     6)  $0,36 \cdot x = 3,618$     9)  $2,34 \cdot x = 4,914$

136. Գտեք մտավոր քանորդները և զրոյցեք, թե այդ քանորդները պակասորդով են, թե հավելուրդով.

1)	2)	3)	4)	5)	6)	7)	8)	9)	10)	11)	12)	13)	14)	15)
$435 : 13$	$900 : 96$	$37,4 : 19$	$1,05 : 12$	$0,1 : 26$	$23,45 : 3$	$0,81 : 8$	$341,3 : 12$	$0,074 : 1,4$	$9,13 : 3,6$	$0,531 : 0,053$	$128,5 : 0,18$	$72,4 : 0,13$	$0,12 : 37,8$	$106,5 : 2,145$
մինչև 1-ի	» 0,1-ի	» 0,1-ի	» 0,01-ի	» 0,001-ի	» 0,01-ի	» 0,01-ի	» 0,01-ի	» 0,01-ի	» 0,01-ի	» 0,01-ի	» 1-ի	» 0,001-ի	» 0,01-ի	» 0,01-ի
մոտ. ճշտութ.	» »	» »	» »	» »	» »	» »	» »	» »	» »	» »	» »	» »	» »	» »

136. ա. Հետեյալ թվերը կլորացրեք՝

- ա) մինչև ամբողջ միավորներ՝ 0,7; 12,5; 26,3; 1,43; 0,916  
 բ) մինչև տասերորդական մասեր՝ 3,68; 14,05; 27,354; 0,215  
 գ) մինչև հարյուրերորդական մասեր՝ 15,634; 2,789; 26,123; 0,053

դ) մինչև հազարները՝ 56 789; 10 032; 24 551

ե) մինչև միլիոնները՝ 3 916 854; 54 325 611

137. Յերկու թվերի արտադրյալը հավասար է 12,5-ի. բազմապատկելին հավասար է 0,8-ի: Գտեք բազմապատկիչը:

138. Ի՞նչ թվի վրա պետք է բաժանել 5-ը, վոր ստացվի 0,025:

139. Քանի՞ անգամ 0,7-ը մեծ է, քան 0,25-ը: Քանի՞ անգամ 0,14-ը փոքր է 0,7-ից:

140. Ի՞նչ թվով պետք է բազմապատկել 0,03-ը, վոր արտադրյալում ստացվի 0,01713:

141. 6,8-ը քանի՞ անգամ է պարունակվում 25,16-ի մեջ:

142. 3,12-ը 2,808-ի վոր մասն է կազմում:

143. Ի՞նչ փոփոխության է լինթարկվում քանորդը, յեթև բաժանելին բազմապատկում ենք 5-ով, իսկ բաժանարարը՝ 2,5-ով. յեթև բաժանելին բաժանում ենք 1,5-ի վրա, իսկ բաժանարարը՝ 6-ի վրա. յեթև բաժանելին ու բաժանարարը բաժանում ենք 0,6879-ի վրա. յեթև բաժանելին բազմապատկում ենք 6-ով, իսկ բաժանարարը բաժանում ենք 0,02-ի վրա. յեթև բաժանելին բաժանում ենք 0,16-ի վրա, իսկ բաժանարարը՝ բազմապատկում ենք 0,5-ով:

144. Ի՞նչ փոփոխության է լինթարկվում քանորդը, յեթև բաժանելին բաժանում ենք 3,95-ի վրա, իսկ բաժանարարը՝ 0,158-ի վրա:

145. Գտեք այն թիվը, վորի 0,027՝ մասը հավասար է 2,43-ի:

146. Բաժանելին հավասար է 2,7-ի, քանորդը՝ 20-ի: Գտեք բաժանարարը:

197. 0,49 և 0,53 թվերի գումարը փոքրացրեք 2,5 անգամ:
198. Անհայտ թվի 0,24 մասը հավասար է 1,2-ի: Գտեք անհայտ թիվը:
199. Անհայտ թվի 0,4 մասը հավասար է 9,6-ի: Գտեք այդ անհայտ թվի 0,75 մասը:
200. Յերկու թվերի արտադրյալը հավասար է 81-ի. յեթե արտադրիչներից մեկին ավելացնենք 1,5, իսկ մյուսն անփոփոխ թողնենք, ապա արտադրյալը հավասար կլինի 135-ի: Գտեք արտադրիչները:
201. 9 մ յերկարութուն ունեցող յերկաթե հեծանը 50° տաքացնելիս 5,4 մմ-ով յերկարացավ: 1° տաքացնելիս յերկաթն իր յերկարութան վեր մասի չափ յերկարացավ:
202. Պլատինը ջրից ծանր է 21,4 անգամ, իսկ արծաթը՝ 19,5 անգամ: Պլատինն արծաթից քանի՞ անգամ է ծանր (մինչև 0,1-ի ճշտութունով):
92. Վտաով, ձիով ե հեծանվով շարժվելու արագություններն հարաբերում են այնպես, ինչպես  $2\frac{1}{2} : 5 : 6$ : Յերկաթուղային կայարանից մինչև գյուղը հեծանվով կարելի յե 18 րոպե շուտ հասնել, քան ձիով: Վորոշեցեք այդ հեռավորությունը, ընդունելով հետիոտնի արագությունը ժամում 5 կմ:

93. Յերեք բես տեղափոխության համար վճարեցին 54,02 տուրլի: Առաջին բնոր 143 կգ եր ե տեղափոխեցին 125 կմ, յերկրորդը՝ 200 կգ եր ե տեղափոխեցին 111 կմ, իսկ յերրորդը՝ 74 կգ եր ե տեղափոխեցին 180 կմ: Յուրաքանչյուր բեռի տեղափոխությունը ինչ արժե:

Համեմատություններ  
66

94. Հետևյալ նախադասությունները գրեցեք համեմատության ձևով:

1) 8-ը հարաբերում ե 16-ին այնպես, ինչպես 2-ը 4-ին:

2) 72-ը 12-ից այնքան անգամ ե մեծ, քանի անգամ 54-ը մեծ ե 9-ից:

3) 13-ը 65-ի այնքան մասն ե կազմում, վորքան մասն ե կազմում 19-ը 95-ի:

95. Կարելի՞ յե հետևյալ հարաբերություններից համեմատություն կազմել՝

1) 12 : 4 ե 27 : 9

4)  $\frac{1}{5} : 2$  ե  $0,4 : 2$

2) 10 : 2 ե 15 : 5

5)  $1\frac{2}{3} : 1\frac{1}{3}$  ե  $1\frac{1}{2} : 1\frac{1}{5}$

3) 15 : 18 ե 10 : 12

6)  $\frac{3}{4} : \frac{3}{2}$  ե  $\frac{5}{8} : \frac{5}{2}$

96. Տված հարաբերություններից ընտրել այնպիսիները, վորոնցից հնարավոր լինի համեմատություն կազմել:

15 : 20, 18 : 6, 24 : 4, 6 : 8, 42 : 7, 3 : 1, 2 : 4,

4 : 16,  $\frac{2}{3} : \frac{1}{6}$ , 40 : 80,  $\frac{5}{8} : \frac{5}{32}$ , 1,4 : 5,6

97. Գտեք մի քանի համեմատություն, վորոնց հարաբերությունների հայտարարները հավասար լինեն 3, 7, 8, 10, 0,5,  $\frac{1}{4}$ ,  $\frac{2}{3}$ ,  $\frac{4}{5}$  թվերին:

98. Ստուգեցեք, ճիշտ են արդյոք հետևյալ հավասարությունները՝

14 : 7 = 25 : 12,5

75 : 15 = 120 : 60

28 : 7 = 20 : 4

4,2 : 3 = 2,6 : 2

$\frac{5}{6} : \frac{1}{3} = 2,5 : 1$

$\frac{7}{15} : \frac{1}{15} = \frac{6}{7} : \frac{1}{7}$

99. Կարելի՞ յե տված հետևյալ չորս թվերից համեմատություն կազմել:

1) 9, 3, 21, 7

3) 100, 80, 4, 5

2) 15, 14, 8, 75

4)  $\frac{2}{3}$ ,  $\frac{1}{4}$ ,  $1\frac{3}{4}$ ,  $1\frac{5}{16}$

100. Ճիշտ կմնձ  $75 : 15 = 105 : 21$  համեմատությունը, յեթե առաջին հարաբերություն յերկու անդամներն ել բաժանենք 5-ի վրա, իսկ յերկրորդ հարաբերության անդամները բաժանենք 7-ի վրա:

101. Ճիշտ կմնձ  $2 : 3 = 8 : 12$  համեմատությունները, յեթե առաջին հարաբերության յերկու անդամներն ել բազմապատկենք 11-ով, իսկ յերկրորդ հարաբերության անդամները՝ 9-ով:

102. Ճիշտ կմնձ  $\frac{3}{8} : \frac{1}{4} = \frac{15}{16} : \frac{5}{8}$  համեմատությունը, յեթե առաջին հարաբերության անդամները բազմապատկենք 8-ով, իսկ յերկրորդ հարաբերության անդամները՝ 16-ով:

103. Ճիշտ կմնձ  $36 : 12 = 48 : 16$  համեմատությունը՝ յեթե

- 1) յերկու ծայր անդամները փոքրացնենք 2 անգամ.
- 2) » » » մեծացնենք 3 անգամ.
- 3) » միջին » փոքրացնենք 6 անգամ.
- 4) » » » մեծացնենք 4 անգամ.

104. Հետևյալ համեմատություններով ստուգեցեք համեմատության գլխավոր հատկությունը՝

$$1 : 3 = 6 : 18 \quad 0,1 : 0,5 = 2 : 10$$

$$2 : 9 = 4 : 18 \quad 8 : 6 = \frac{1}{3} : \frac{1}{4}$$

105. Հետևյալ հավասար արտադրյալներից կազմեցեք համեմատություն և ցույց տվեք յուրաքանչյուր հարաբերության հայտարարը՝

$$3 \cdot 24 = 8 \cdot 9 \quad 2 \cdot 5 = 0,5 \cdot 20 \quad \frac{3}{4} \cdot \frac{1}{5} = \frac{5}{12} \cdot \frac{9}{25}$$

$$5 \cdot 12 = 3 \cdot 20 \quad 3,8 \cdot 2 = 76 \cdot 0,1$$

106. Կարելի՞ յե  $63 : 21 = 96 : 32$  համեմատության հարաբերությունների նախորդ անդամները մեծացնել (կամ փոքրացնել) նույնքան անգամ. հետևորդ անդամները մեծացնել նույնքան անգամ. դրանից փոխված և հարաբերության հայտարարը, ճիշտ կմնձ համեմատությունը:

107. Կատարեցեք անդամների կրճատում հետևյալ համեմատությունների մեջ՝

- |                        |                             |
|------------------------|-----------------------------|
| 1) $27 : 90 = 6 : 20$  | 4) $10 : 16 = 25 : 40$      |
| 2) $45 : 30 = 27 : 18$ | 5) $560 : 140 = 360 : 90$   |
| 3) $18 : 6 = 51 : 17$  | 6) $1260 : 945 = 720 : 540$ |

108. Հետևյալ համեմատություններն ազատեցեք կոտորակներից՝

- |   |  |
|---|--|
| 1) $4 \frac{1}{4} : 2 = 8 \frac{1}{2} : 4$                    | 7) $5 \frac{3}{8} : 14 \frac{1}{3} = 12 : 32$                            |
| 2) $\frac{16}{7} : \frac{1}{7} = 5 \frac{1}{3} : \frac{1}{3}$ | 8) $8 \frac{1}{3} : 4 \frac{1}{2} = 6 \frac{1}{4} : 3 \frac{3}{8}$       |
| 3) $3,5 : 1,5 = 4,2 : 1,8$                                    | 9) $0,8 : 0,25 = 1,536 : 0,48$   |
| 4) $\frac{1}{14} : \frac{1}{7} = \frac{1}{6} : \frac{1}{3}$   | 10) $28,48 : 3,2 = 8,01 : 0,9$   |
| 5) $8,5 : 4 = 4,25 : 2$                                       | 11) $2,84 : 5 \frac{17}{25} = \frac{2}{3} : 1 \frac{1}{3}$               |
| 6) $0,4 : 3 = 0,16 : 1,2$                                     | 12) $3 \frac{13}{15} : 4 \frac{5}{6} = 1 \frac{7}{20} : 1 \frac{11}{16}$ |

109. Գտեք հետևյալ համեմատությունների անհայտ անդամը՝

- |   |  |
|---|--|
| 1) $x : 1 = 2 : 7$                                | 13) $2 \frac{1}{2} : 1 \frac{1}{4} = 2 : x$    |
| 2) $x : 9 = 7 : 14$                               | 14) $2 \frac{2}{3} : 0,03 = 1 \frac{7}{9} : x$ |
| 3) $x : 300 = 54 : 40$                            | 15) $12 : x = 0,4 : 1,8$                       |
| 4) $855 : 720 = 570 : x$                          | 16) $5 : 3,6 = 1 : x$                          |
| 5) $45 : 18 = 180 : x$                            | 17) $7 : 1 \frac{3}{4} = 3,6 : x$              |
| 6) $21 : x = 36 : 12$                             | 18) $0,25 : 1,4 = 0,75 : x$                    |
| 7) $75 : 9 = x : 9$                               | 19) $\frac{x}{75} = \frac{7}{3}$               |
| 8) $608 : 912 = x : 768$                          | 20) $\frac{3,5}{8,4} = \frac{x}{4,5}$          |
| 9) $184 : x = 92 : 230$                           | 21) $\frac{x}{7} = 12 : 17$                    |
| 10) $100 : x = 300 : 480$                         | 22) $3,5 : x = 0,8 : 2,4$                      |
| 11) $\frac{1}{8} : \frac{1}{3} = \frac{3}{7} : x$ | 23) $6,8 : 2,5 = x : 1,5$                      |
| 12) $3,1 : 9,3 = x : \frac{7}{9}$                 |  |

110. Լուծեցե՛ք հետևյալ համեմատությունները՝

1)  $4,5 : 3x = 4 : 23$

5)  $1\frac{1}{2}x : \frac{3}{4} = 2\frac{1}{2} : 0,125$

2)  $180 : 8x = 75 : 30$

6)  $1,25 : 0,4 = 1,35 : 0,3x$

3)  $2x : 9 = 2\frac{1}{3} : 5\frac{1}{4}$

7)  $0,3 : \frac{2}{5}x = 1 : 0,01$

4)  $\frac{2}{3}x : \frac{1}{5} = 3\frac{1}{3} : \frac{1}{6}$

8)  $1 : 1\frac{1}{5} = \frac{2}{3} : 2x$

111. Ինչի՞ յեն հավասար և ի՞նչ միավորներով են արտահայտվում հետևյալ համեմատությունների անհայտ անդամները՝

1)  $x : 7 = 8 : 12$

3)  $30 \text{ ուր.} : 25 \text{ աուր.} = x : 5 \text{ ժամ}$

2)  $x : 30 = 6 : 45$

4)  $10a : x = 15 : 24$

112. Համեմատության ծայր անդամներն են 12 և 7, միջին անդամներից մեկը հավասար է 21-ի: Ինչի՞ յեն հավասար մյուս միջին անդամը:

113. Համեմատության միջին անդամներն 3,5 և 4, իսկ ծայր անդամներից մեկը հավասար է 2: Գտե՛ք մյուս ծայրանդամը:

114. Գտե՛ք տված յերեք թվերի չորրորդ համեմատականը:

1) 20, 5, 7, 2) 10, 16, 3, 3)  $7\frac{1}{2}, 25\frac{1}{2}, 6$ , 4) 0,94; 3,5; 7,5

115. Հետևյալ խնդիրների տվյալներից կազմեցե՛ք և լուծե՛ք համեմատություններ.

1) Համաձուլվածքը կազմված է վոսկուց և պղնձից, պղնձի կշիռը հարաբերում է վոսկու կշիռն այնպես, ինչպես 5 : 6: Վորոշեցե՛ք համաձուլվածքի մեջ յեղած վոսկու կշիռը, գիտենալով, Վոր պղնձի կշիռը հավասար է 75 գ-ի:

2) Հոր տարիքը հարաբերում է վորդու տարիքին այնպես, ինչպես 8 : 3: Վորդին քանի՞ տարեկան է, յեթե հայրը 49,6 տարեկան է:

3) Շրջանի արամագիծը հարաբերում է շրջանագծին այնպես, ինչպես 7 : 22: Վորոշեցե՛ք այն շրջանագծի յերկարությունը, Վորի գիմագիծը հավասար է 2,1 մ-ի:

Ուշի՞ յեն հակադարձ համեմատական մեծություններ

116. Գնացքը ժամում անցնում է 40 կմ: Գտե՛ք կիրճեր կացնի 2 ժամում, 3 ժամում, 4 ժամում, 5 ժամում և այլն:

Արդյունքները գրեցե՛ք աղյուսակում (չ-ն ժամանակն է, Տ-ը ճանապարհը՝ կիրճեր):

Ինչպիսի՞ առնչություն կա գնացքի անցած ճանապարհի և ժամանակի միջև:

t	1 ժամ	2 ժամ	3 ժամ					
s	40 կմ	?	?					

117. Յերկու քաղաքների միջի հեռավորությունը հավասար է 900 կմ-ի: Աղյուսակում գրե՛ք այն ժամանակամիջոցը, Վոր անհրաժեշտ է այդ քաղաքների միջև յեղած հեռավորությունն անցնելու համար, յեթե գնացքի արագությունը հավասար յինի մեկ ժամում 20 կմ-ի, 25 կմ-ի, 30 կմ-ի, 40 կմ-ի: Ինչպիսի՞ առնչություն կա այս խնդրում նշված մեծությունների միջև:

Արագությունը մեկ ժամում	20 կմ	25 կմ	30 կմ	40 կմ			
Ժամերի թիվը	45 ժամ	?	?	?			

118. Ցինկի տեսակարար կշիռը հավասար է 7-ի: Հաշվեցե՛ք և աղյուսակում դասավորեցե՛ք ցինկի կշիռն համապատասխանող թվերը, յերբ ցինկը վերցված է 2, 3, 4, 5, և այլն խորանարդ դեղիմար: Ինչպիսի՞ առնչություն գոյություն ունի ժավալի և կշիռի միջև:

119. Ցույց տվե՛ք ուշի՞ յեն համեմատական և հակադարձ համեմատական մեծությունները հետևյալ գույզերի մեջ. 1) ապքանքի քաշի և նրա գինը. 2) գնացքի արագությունը և տվյալ

հեռավորութիւնն անցնելու համար անհրաժեշտ ժամանակը, 3) բանվորները քանակը և մի վորոշ աշխատանք կատարելու համար անհրաժեշտ ժամանակը, 4) մարմնի կշիռը և նրա ծաւալը, 5) ուղղանկյուն դաշտի յերկարութիւնն ու լայնութիւնը, յերբ մակերեսը մնում է անփոփոխ, 6) աշխատավարձի գումարը և գործարանում աշխատող բանվորներին թիվը, 7) բաժիններին մեծութիւնը և մարդկանց քանակը, վորոնց միջև բաժանվում է տվյալ մթերապաշարը, 8) բնոյի փոխադրութեան արժեքը և հեռավորութիւնը:

120. Առնչութիւն գոյութիւն ունի՞, 1) քառակուսու կողմի և նրա մակերեսի միջև, 2) խորանարդի կողմի և ծավալի միջև:

121. Ինչպէս կփոխվի քառակուսու մակերեսը, յեթե նրա կողմը կրկնապատկենք, յեռապատկենք, տասնապատկենք:

122. Ինչպէս կփոխվի խորանարդի ծավալը, յեթե նրա կողմը կրկնապատկենք, յեռապատկենք, տասնապատկենք:

ԽՆՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՈՒՂԻՊ  
ԿԱՄԵՄԱՏԱԿԱՆ  
ՄԵԾՈՒՔՅՈՒՆՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

123. 5 մ գործվածքին վճարված է 27 ու: Նույն տեսակի 10 մ գործվածքին ինչքան պետք է վճարել:

124. 12 ձեռք հագուստի համար գործածեցին 49,8 մ մահուղ նույն տեսակի 74,7 մ մահուղից քանի՞ ձեռք հագուստ կարելի չե կարել:

125. Խառատի դաղգյահով  $3\frac{1}{2}$  ժամում կտրեցին 56 բոլո: Նույն դաղգյահով 12 ժամում քանի՞ բոլո կարելի չե պատրաստել:

126. 15 ֆառ. մ հատակը ներկելու համար պահանջվում է 2,1 կգ ոքրա: Ինչքան ոքրա չե պահանջվում 6,3 մ  $\times$  4,5 մ չափսերն ունեցող սենյակի հատակը ներկելու համար:

127. 41,4 գ սառույցը բռնում է 46 խոր. սմ ծավալ: Վորոշեցեք 18,9 գ կշռող սառույցի ծավալը:

128. ա) 27,4 հա արտը հնձելու համար խորհանտեսութիւնը վարձում է 16 բանվոր: 41,1 հա արտը միևնույն ժամանակում հնձելու համար խորհանտեսութիւնը քանի՞ բանվոր պետք է վարձի:

բ) Հնձող մեքենան 3,5 հա կարող է հնձել 7 ժամում: Յերեք մեքենայով 7,6 հա հնձելու համար ինչքան ժամանակ է պետք:

129. 270 կգ հաց թխելու համար գործածեցին  $217\frac{1}{2}$  կգ ալյուր: 801 կգ հացի համար ինչքան ալյուր կզնա:

130. 14 խոր. դմ յերկաթը կշռում է 103,2 կգ: Քանի՞ կիրորամ կկշռի յերկաթի կտորը, յեթե ծավալը հալասար է 25 խոր. դմ-ի, 40 խոր. դմ-ի:

131. 38,4 խոր. մ տարողութեան բաքը լցվում է  $2\frac{1}{4}$  ժամում: Ինչքան ժամանակում կլցվի 12,8 խոր. մ տարողութեան բաքը, յեթե ջուրը միևնույն արագութեամբ լցվի:

132.  $9\frac{1}{2}$  մ յերկարութիւն և 5,3 մ լայնութիւն ունեցող սենյակի հատակը ներկելու համար վճարեցին 100,7 ուրբի: 6,9 մ յերկարութիւն և 5,7 մ լայնութիւն ունեցող սենյակի հատակը ներկելու համար ինչքան պետք է վճարեն:

133. Պոմպը 72 խոր. մ ջուրը բարձրացնում է 4 ժամ 12 բոպեյում: 2140 խոր. մ ջուրն ինչքան ժամանակում կբարձրացնի:

134. Պատի ժամացույցի ճոճանակը  $2\frac{1}{5}$  բոպեյում կատարում է 198 ճոճում: 3 բոպե 12 վայրկյանում քանի՞ ճոճում է կատարում:

135. 7,9 գուլյ կաթից ստացվում է 3,2 կգ կարագ, 16 կգ կարագ ստանալու համար ինչքան կաթ պետք է վերցնել:

136. Ժամացույցը 2 ժամ 15 բոպեյի ընթացքում հետ է մնում  $1\frac{1}{2}$  վայրկյան: Ինչքան ժամանակում հետ կմնա  $1\frac{1}{3}$  վայրկյան:

137. 5 ֆառ. մ փայտյա պատը կավարելու համար պահանջվում է 75 կավար: 32 ֆառ. մ մակերես ունեցող պատը կավարելու համար քանի՞ կավար է պետք:

138. 5 կապ կավարի վրա գործածվում է  $4\frac{3}{8}$  կգ մեխ: 18 կապ կավարի համար քանի՞ կիրորամ մեխ է պահանջվում:

139. Լեռան լանջով գնացող ճանապարհը յուրաքանչյուր 15 մ ճանապարհի վրա ունի 1,2 մ վերելք: Լեռան ստորոտից 375 մ հեռավորութեան վրա գտնվում է մի սանաուորիս: Լեռան հիմքի նկատմամբ թե՛ ըարձրութեան վրա յետ գտնվում սանաուորիսն:

140. 50 քառ. մ մակերես ունեցող միջին խորութեան մացառուտը կտրատելու համար պահանջվում է 1,2 ժամ: Միևնույն խտութեան 140 քառ. մ մացառուտը կտրատելու համար ինչքան ժամանակ է պահանջվում:

141. Յերեք շարք լարային ցանց պատրաստելու համար յուրաքանչյուր 10 մ ցանցի համար պահանջվում է 12 բանվորական ժամ: Նույնպիսի 750 մ ցանց պատրաստելու համար քանի՞ բանվորական ժամ է պետք:

142. 0,3 ս թարմ խնձորից ստացվեց 35 կգ խնձորի չիր 2,1 ս թարմ խնձորից ինչքան չիր կստացվի:

143. 300 քառ. մ արտում ցանում են 4,8 կգ հաճար: 1 հա արտում միատեսակ սլաժաններում ինչքան հաճար պետք է ցանել:

144. 100 կգ հաճարից ստացվում է 80 կգ ալյուր: Նույն սլաժաններում ինչքան հաճար պետք է մթերել, վորպեսզի ստացվի 680 կգ ալյուր:

145. 2 մ ճակատի վրա գնում է 7 քիմիական արկ (3 գլուխ մանոց): 5 կմ ճակատի վրա այդ արկերից քանի՞ հատ է պետք:

146. «Յորդգոն» տրակտորով 3 հա հող վարելն արժե 21,75 ուրբի: 19 հա վարելն ինչ արժե:

147. 5 հա հողի ձիավարն արժե 58 ուրբի: 19 հա հողի ձիավարն ինչ արժե:

Հակազարն համեմատական մեծությունների վերաբերյալ խնդիրներ

148. Գնացքը ժամում 35 կմ միջին արագությամբ յերկու քաղաքների միջի հեռավորությունն անցնում է 20 ժամում: Յեթե գնացքի արագությունը 7 կմ-ով ավելացնենք, ապա նույն հեռավորությունն անցնելու համար թե՛ ժամանակ է պետք:

149. 16 քարտաշ փողոցը սալահատակեցին 21 որում: Նույն փողոցը 14 որում սալահատակելու համար քանի՞ քարտաշ է պետք:

150. 12 մարդ մի աշխատանք վերջացրին 8 ժամում: 36 մարդ նույն աշխատանքը քանի՞ ժամում կվերջացնեն:

151. Շենքը աքաղցնելու համար պատրաստեցին 60 որվա վառելիք՝ որական 700 կգ նորմալի հաշվով: Նույն վառելիքը քանի՞ որ կըսվանակացներ, յեթե որական նորման լիներ 525 կգ:

152. Գարոցական կոպերատիվը հաշվեց, վոր 60 ուրբով կտրող է գնել 800 մատիտ: Բայց մատիտների հատը  $2\frac{1}{2}$  կոպեկով թանկացրին: Այժմ այդ գումարով նույն տեսակի քանի՞ հատ մատիտ կարելի յե գնել:

153. Նավթը բեռնելու համար անհրաժեշտ է 30 ցիստերն յուրաքանչյուրը 16,6 ս տարողութեան: Բայց յերկաթուղային կայարանում կային միայն մեծ ցիստերններ, յուրաքանչյուրը 24,75 ս տարողութեամբ: Նավթը բեռնելու համար վերջին ցիստերներից քանի՞ հատ է պետք:

154. Սենյակի հատակը լինելու համար պետք է գնել 0,9 մ լայնություն ունեցող 36 մ լինողում, բայց պահեստում նույն լայնություն լինողում չգտնվեց և առաջարկեցին վերցնել 0,25 մ լայնության լինողում: Քանի՞ մետր լինողում պետք է գնել:

155. Յերկու հորվակներ միացած են լողային փոխանցումով: Մեկի շրջանագծի յերկարությունը հավասար է 528 սմ, մյուսինը՝ 225 սմ: Առաջինը մեկ ըսպելում կատարում է 60 պտույտ: Յերկրորդը մեկ ըսպելում քանի՞ պտույտ է անում:

156. 720 մմ տրամագիծ ունեցող հորվակը, վորը ըսպելում կատարում է 143 պտույտ, փոխարին փոխանցումով միացած է մի ուրիշ հորվակի, վորը ըսպելում կատարում է 396 պտույտ: Քոք յերկրորդ հորվակի տրամագիծը:

157. Շարժող հորվակի տրամագիծը հավասար է 300 մմ-ի, իսկ նրա պտտման արագությունը 400 պս./րապ.-ի: Վորտեցեք շարժող հորվակի պտտման արագությունը, յեթե նրա տրամագիծը հավասար է 100 մմ-ի:

158. Առանձնավոր անիմն ունի 75 տտամ է կատարում է 92 պս./րապ.: Ըսպելում քանի՞ պտույտ կկատարի առաջինի հետ միացած 25 տտամ ունեցող անիվը:

159. Յեթե քարային պարկետի համար վերցնենք 8 դմ յերկարությունն և 1,2 դմ լայնությունն ունեցող ուղղանկյուն սալիկներ, ապա կգնա ընդամենը 1380 հատ: Քանի՞ քառակուսի սալիկ կգնա պարկետի համար, յեթե վերցնենք 0,01 ֆառ. մ չափսի սալիկ:

160. Բեռը փոխադրելու համար անհրաժեշտ է 41 վագոն: Յուրաքանչյուր վագոն բեռնում են 16,5 ս: Նույն բեռը փոխադրելու համար 20,5 ս տարողությամբ քանի՞ վագոն է պետք:

161. Կոլանավարչությունը արար հնձելու համար նշանակեց 27 հոգուց բաղկացած մի բրիգադ: Նույն արար 9 որում հնձելու համար քանի՞ մարդ պետք է նշանակել, յեթե հայտնի յե, վոր առաջին բրիգադը կարող է հնձել 14 որում:

162. Բեռը տեղափոխելու համար անհրաժեշտ է 14 ավտոմոբիլ, յուրաքանչյուրը 3 ս տարողությամբ: Բազայում ունենին  $1\frac{3}{4}$  ս տարողության ավտոմոբիլներ: Քանի՞ ավտոմոբիլ պետք է ուղարկեն նույն բեռը տեղափոխելու համար:

163. 15 փայտահատ անտառամասը կտրեցին 46 որում: Նույն անտառամասը 23 փայտահատ քանի՞ որում կկտրեն:

164. 28 հողու համար կա  $7\frac{1}{2}$  որվա աշխատանք: Նույն աշխատանքը քանի՞ որ կտևի, յեթե վարձեն ընդամենը 21 հողի:

165. Յեթե որական 640 կգ ածուխ ծախսեն, ածխի պաշարը կբավականացնի 45 որ: Նույն ածուխը քանի՞ որ կբավականացնի, յեթե որական ծախսեն 720 կգ:

166. «Բուլդոզեր» արակառքը մեկ ժամում 4,9 կմ արագությամբ գնալով ամբողջ հեռավորությունն անցավ  $5\frac{1}{2}$  ժամում: Նույն հեռավորությունը քանի՞ ժամում կանցնի այդ արակառքը, յեթե նրա արագությունը մեկ ժամում մեծացնենք մինչև 7,7 կմ:

167. 5,4 | կերոսին տանող շի մեջ կերոսինի փոխարեն լցված է նույն կշռի ձյութ: Ի՞նչ ծավալ է գրավում այդ ձյութը (կերոսինի տեսակաբար կշիռն է 0,8, ձյութինը՝ 1,2):

168. Յեթե շոգենավը մի ժամում 20 կմ գնա, ապա նա մի նավահանգստից մյուսը կհասնի  $9\frac{1}{5}$  ժամում: Այդ հանապարհն ինչքան ժամանակում կանցնի, յեթե մի ժամում գնա 18,4 կմ:

169. Սավառնակը ժամում 180 կմ արագությունով յերկու քաղաքների միջի հեռավորությունն անցավ 3 ժամում: Ինչքան ժամանակում կվերադառնա, յեթե քամու պատճառով վերադառնում է միայն 160 կմ արագությունով:

170. Յեթե յուրաքանչյուր ձիուն որական  $3\frac{2}{3}$  կգ վարսակ տան, ապա վարսակի ամբողջ պաշարը հեծելավաշտին կբավականացնի 18 որ: Որական ինչքան վարսակ պետք է տան յուրաքանչյուր ձիուն, վոր ամբողջ պաշարը բավականացնի 15 որ:

171. Յերկաթուղային շինարարության մասում հողային աշխատանք կատարելու համար սկզբում նշանակեցին 57 հողի, վորոնք կարող էին աշխատանքը վերջացնել 45 որում: 15 որ հետո անհրաժեշտ յեղավ աշխատանքն արագացնել, վորի համար նշանակեցին լրացուցիչ մի քանի հողի, և ամբողջ աշխատանքը վերջացրին սկզբում նախատեսած ժամկետից 12 որ շուտ: Քանի՞ բանվոր էին ավելացրել:

172. 10 մ յերկարության լարափակոց անցկացնելու համար անհրաժեշտ է 74 կգ լար: 38 մ յերկարության լարափակոց անցկացնելու համար քանի՞ կիլոգրամ լար է պետք, յեթե լարափակոցի լայնությունը յերկու դեպքում էլ հավասար է 6 մ-ի:

173. 9 մ յերկարությունն և 4 մ բարձրությունն ունեցող պատը սվաղելու համար անհրաժեշտ է 4 ց ալբաստր: 8,5 մ երկարությունն և 3,6 մ բարձրությունն ունեցող պատի համար ինչքան ալբաստր է պետք:

174. Հողափորները փոս փորեցին: Առաջին որն աշխատանքի ներկայացան 35 հողի, վորոնք դուրս հանեցին 875 խոր. մ հող: Մյուս որը, նույն տեմպով աշխատելով, այդ աշխատանքը վերջացրին 42 հողափորներ: Վերջին հողափորներն ինչքան հող դուրս հանեցին:

Համեմատական մեծությունների վերաբերյալ իբրեզիրներ (տառը բաժին)

175. 6,5 մմ քայլի դեպքում պտուտակի վրա տեղավորվում է 260 գալար: Քանի գալար կտեղավորվի պտուտակի վրա, յեթե քայլը հավասար լինի 5 մմ-ի:

176. Քանի մետր է պարունակում 1 ս փշալարը, յեթե հայտնի յե, վոր այդ փշալարի 16 կգ-ը 107 մ է պարունակում:

177. Փակնագործը 25 բոպեյում կտրում է 2 բոյս: 7 ժամյա բանվորական որում քանի բոյս կկտրի, յեթե ընդմիջումներին նա ընդամենը 45 բոպե յե վառնում:

178. Գործարանում մազուխի պաշարը 950 ս է: Միջին հաշվով 3 որում ծախվում է 57 ա: Մազուխի պաշարը քանի որ կբավականացնի:

179. Կառքի առջևի անիվը, վորի շրջանագծի յերկարութունը հավասար է 2,6 մ-ի, վորոշ հեռավորության վրա պտրտվեց 375 անգամ: Հետևի անիվը, վորի շրջանագծի յերկարութունն է 3,25 մ, նույն այդ հեռավորության վրա քանի անգամ պտրտվեց:

180.  $\frac{1}{25\ 000}$  մասշտաբով գծված քարտեզը արտազծեցին  $\frac{1}{10\ 000}$  մասշտաբով: Ինչքան կլինի նոր քարտեզի վրա յերկաթուղու յերկարութունը, յեթե նրա յերկարութունը հին քարտեզի վրա 12,5 սմ է:

181. Ինդին պղնձից ձուլված պանակը կշռում է 25 կգ: Վորոշեցեք նրա փայտյա մոդելի քաշը, յեթե փայտի տեսակարար կշիռը 0,65 է, իսկ դեղին պղնձի տեսակարար կշիռը՝ 8,6:


182. 10 հորվակ ձուլելու համար ինչքան չուգուն է պեաք, յեթե կեչի փայտից պատրաստած մոդելը կշռում է 3,6 կգ: Կեչի փայտի տեսակարար կշիռը 0,6 է, չուգունի տեսակարար կշիռը՝ 7,2: Չուգունի հալակորուստն ընդունեցեք ձուլվածքի 0,05 մասը:

183. 25 մոմանոց 120 ելեկտրական լամպ ունեցող հիմնարկն ելեկտրական եներգիայի ոգտագործման համար ամսական վճարում է 96 ա.: Ամսական ինչքան կանտոնի հիմնարկը, յեթե 40 հատ 25 մոմանոց լամպը փոխարինի 16 մոմանոց լամպերով (վառելու ժամանակամիջոցը նույնն է):

184. Մոտորի հորվակի տրամագիծը հավասար է 200 մմ-ի, և կատարում է 1200 պս/րոպ: Ինչքանով պեաք է պակասեցնենք հորվակի տրամագիծը, վոր է կատրոմոտորի պտույտների թիվը մինչև 1600 պս/րոպ հասցնելիս շարժող փոկի շարժման արագութունը մնա նախկինը:

185. Յերկու հորվակ միացած են փոկային փոխանցումով հորվակներից մեկի շրջանագծի յերկարութունը 80 սմ է, իսկ մյուսինը՝ 185 սմ: Վորոշեցեք մի բոպեյում քանի պտույտ կանի յերկրորդ հորվակը, յեթե առաջինն անում է 74 պս/րոպ:

186. Յերկու հորվակ միացած են փոկային փոխանցումով հորվակներից մեկի շրջանագծի յերկարութունը հավասար է 65 սմ-ի: Վորոշեցեք յերկրորդ հորվակի շրջանագծի յերկարութունը, յեթե առաջինը կատարում է 154 պս/րոպ, իսկ յերկրորդը՝ 110 պս/րոպ:



նկ. 1

187. A առամնավոր անիվն ունի 60 առամ և կատարում է 114 պս/րոպ: Գտեք տարվող B առամնավոր անիվի պտույտների թիվը, յեթե նրա առամների թիվը հավասար է 25-ի (նկ. 1):


188. Կոնսկան առամնավոր անիվներից մեկը կատարում է 3 բոպեյում 240 պտույտ և ունի 60 առամ: Բոպեյում քանի պտույտ կկատարի մյուս անիվը, յեթե նրա առամների թիվը հավասար է 48-ի:

189. Գայլիկոնը կատարում է 160 պս/րոպ: Պտտող կոնսկան B առամնավոր անիվն ունի 60 առամ և կատարում է 40 պս/րոպ (նկ. 2): Վորոշեցեք պտտվող C առամնավոր անիվի պտույտների թիվը:


190. Ունենք 4 հորվակ (նկ. 3): Առաջին հորվակը կատարում է 210 պս/րոպ: Հորվակների տրամագծերը համապատասխանաբար

խանորեն հավասար են՝ 60 սմ, 56 սմ, 48 սմ, 36 սմ: Վորոշեցեք վերջին հորվակի պտույտների թիվը:

191. A անիվը կատարում է 24 պս/րոպ և ունի 72 ատամ, B անիվը ունի 90 ատամ, C-ն՝ 54 ատամ, D-ն՝ 48 ատամ. (նկ. 4): A անիվը միացած է C-ի հետ, իսկ B-ն D-ի հետ: C և B անիվները հագցված են միևնույն գլանի վրա: Գտեք D անիվի պտույտների թիվը:



նկ. 2



նկ. 3

192. Բոպեյում ինչ թվով պտույտներ կանի D անիվը (նկ. 4), չեթե A անիվը ունի 75 ատամ և կատարում է 40 պս/րոպ:

193. A անիվը (նկ. 4) ունի 64 ատամ և կատարում է 180 պս/րոպ, B անիվը ունի 28 ատամ, C անիվը՝ 84 ատամ: D անիվը պետք է կատարի 96 պս/րոպ: Գտնել ատամ պետք է ունենա D անիվը:

194. 5 պոմպ 3 ժամում քաշեցին 1800 դույլ ջուր: Նույն ձևի 4 պոմպ 4 ժամ աշխատելով ինչքան ջուր կքաշեն:

195. Յեթե յերկաթալար պատրաստող պտույտը թմբուկը կատարի 60 պս/րոպ, ապա 3 ժամ 20 րոպեյում թմբուկի վրա կկաթաթվի 240 մ լար: Ինչքան ժամանակում թմբուկի վրա կկաթաթվի 100 մ լար, չեթե նա կատարի  $41\frac{2}{3}$  պս/րոպ:

196. 4 կերոսինկա, վորոնք որական վառվում են  $3\frac{1}{2}$


ժամ, 20 որում ծախսեցին 36 | կերոսին: Գտնել որում կծախսեն 28,8 | կերոսին, չեթե յուրաքանչյուր որ պետք է վառվի այդպիսի 5 կերոսինկա որական 4 ժամ 30 րոպե:

197. 230 վերարկու կարելու համար գնաց  $\frac{4}{5}$  մ լայնու-

թյուն ունեցող 805 մ մահուդ: 270 վերարկու կարելու համար ինչքան մահուդ է պետք, չեթե մահուդի լայնությունը լինի 1,2 մ:

198. 2,4 մ չերկարություն, 10 մմ լայնություն և 7 մմ հաստություն ունեցող պողպատե կողը կշռում է 1,32 կգ: Նույն տեսակի պողպատի 4,8 մ չերկարություն, 25 մմ լայնություն և 14 մմ հաստություն ունեցող ձողն ինչքան կկշռի:

199. 4 մ չերկարության, 30 սմ լայնության և 20 սմ հաստության փայտյա հեծանը կշռում է 120 կգ: Ինչքան կկշռի ուրիշ փայտից պատրաստած հեծանը, վորի 2 խոր. սմ-ը կշռում է այնքան, վորքան առաջինի 3 խոր սմ-ը, չեթե նրա չերկարությունը հավասար է 5 մ-ի, լայնությունը՝ 40 սմ-ի, հաստությունը՝ 30 սմ-ի:



նկ. 4

200. 12 վառարան ունեցող շենքը բարդու փայտով 7 ամիս շարունակ տաքացնել կարժենա 480 ուրբլի: Ի՞նչ կարժենա 18 վառարան ունեցող շենքի տաքացումը կեչի փայտով 8 ամսվա ընթացքում, յեթե 7 խոր. մ կեչի փայտը տալիս է այնքան ջերմություն, ինչքան 12 խոր. մ բարդի փայտը, բայց 3 խոր. մ կեչի փայտն արժե այնքան, ինչքան 5 խոր. մ բարդի փայտը:

201. Եջում 42 տող և յուրաքանչյուր տողում 27 տառ պարունակող գիրքը տպագրելու համար անհրաժեշտ է մի որինակին 35 թերթ թուղթ: Նույն ֆորմատի ինչքան թուղթ է պետք, յեթե եջում լինի 54 տող և յուրաքանչյուր տողում 36 տառ:

202. Շենքն 9 լամպով, վորոնք որական վառվում են 5 ժամ, 24 որ լուսավորելու համար վճարեցին 21 ո. 60 կ.։ Նույն շենքը 16,8 ուրբլով քանի որ կարելի յե լուսավորել, յեթե լինի 6 լամպ և վորոնք վառվեն որական 4 ժամ:

203. Միջանցքի հատակը տախտակամածելու համար պահանջվում է 5 տախտակ՝ 3 մ յերկարության և 30 սմ լայնության: 4 մ յերկարություն և 25 սմ լայնություն ունեցող քանի տախտակ է պահանջվում նույն հատակը տախտակամածելու համար:

204. Կարմիր բանակայինների ջոկատի պարենավորման համար 60 որվա հացի պաշար պատրաստեցին այն հաշվով, վոր ամեն մի բանակայինին տան որական 1 կգ հաց: Գանի որ կրավականացնի այդ պաշարի  $\frac{3}{4}$ -ը, յեթե ջոկատի մարդկանց թիվը պակասի նախկին թվի  $\frac{3}{8}$ -ի չափով, իսկ որվա բաժինն ավելանա 500 գրամով:

205. 9 շոգեքարչի համար պատրաստեցին 28,65 ռ. ածուխ, ընդվորում 3 շոգեքարչ պիտի կատարեյին 230 կմ վազք, 2 շոգեքարչ՝ 190 կմ, և 4 շոգեքարչ՝ 210 կմ. Յուրաքանչյուր շոգեքարչի համար քանի կիլոգրամ ածուխ պատրաստեցին:

206. Յերկու միատեսակ բեռի փոխադրության համար վճարված է 180 ուրբլի, ընդվորում առաջին բեռը 6 տոնն եր և փոխադրված է ուղարկման վայրից 75 կմ հեռավորության վրա

գտնվող գործարանը, իսկ յերկրորդը  $6\frac{1}{4}$  տոնն եր և փոխադրված է 120 կմ հեռավորության վրա: Յուրաքանչյուր բեռի փոխադրության համար ինչքան վճարեցին:

207. Գետից անցկացնելու համար կառքից վերցնում են 1 ո., ձիուց 50 կ. իսկ մարդուց 30 կ.: Մի ամսում քանի կառք, ձի և մարդ տեղափոխեցին, յեթե առաջինների թվի հարաբերությունը յերկրորդների թվին հավասար է 2:9-ի: Տեղափոխված մարդկանց թվի հարաբերությունը ձիերի թվին՝  $\frac{2}{7} : \frac{2}{3}$ , և ընդամենը ստացել են 2144 ուրբլի:

208. Կառքի առջևի անիվի շրջանագիծն է  $1\frac{3}{5}$  մ, հետևի անիվինը՝  $2\frac{1}{4}$  մ: Ինչքան է այն ամենափոքր հեռավորությունը, վորի վրա կառքի թե հետևի և թե առջևի անիվն ամբողջ անգամ են պտտվում:

209. Իրար միացած յերկու ատամնավոր անիվներ ունեն 28 և 16 ատամ: Մինչև շարժվելը կավճով նշել են այդ անիվների իրար շոշափող ատամները: Այդ անիվների մեկի և մյուսի քանի պատույտից հետո նշված ատամները կհամընկնեն:

## VII. ՏՈԿՈՍՆԵՐ

Հիմնական հասկացողություններ

### 1. Տոկոսներով արտահայտեցեք (բանավոր)՝

- 1) 0,01; 0,07; 0,13; 0,29; 0,95; 0,87  
 2) 0,1; 0,4; 0,6; 0,7; 0,9  
 3) 1; 2; 3; 12; 25; 1,25; 1,5; 3,2; 4,6; 9,7

4) 0,153; 0,456; 5,023; 1,001; 4,153; 7,006; 3,1425; 5,0615

### 2. Տոկոսներով արտահայտեցեք՝

- 1)  $\frac{1}{100}$ ,  $\frac{1}{2}$ ,  $\frac{1}{4}$ ,  $\frac{1}{5}$ ,  $\frac{1}{10}$ ,  $\frac{1}{20}$ ,  $\frac{1}{25}$ ,  $\frac{1}{40}$ ,  $\frac{1}{50}$ ,  $\frac{1}{3}$ ,  $\frac{1}{9}$ ,  $\frac{1}{17}$ ,  $\frac{1}{8}$   
 2)  $\frac{3}{4}$ ,  $\frac{3}{20}$ ,  $\frac{3}{5}$ ,  $\frac{7}{10}$ ,  $\frac{3}{8}$ ,  $\frac{5}{8}$ ,  $\frac{19}{20}$ ,  $\frac{17}{40}$ ,  $\frac{27}{50}$ ,  $\frac{23}{80}$ ,  $\frac{8}{125}$ ,  $\frac{31}{200}$   
 $\frac{117}{160}$ ,  $\frac{539}{800}$ ,  $\frac{223}{400}$ ,  $\frac{7}{500}$ ,  $\frac{573}{200}$

### 3. Տոկոսներով արտահայտեցեք հետևյալ կոտորակները (0,1<sup>0</sup>/<sub>0</sub>-ի ճշտությամբ)՝

$\frac{2}{3}$ ,  $\frac{4}{7}$ ,  $\frac{5}{11}$ ,  $\frac{7}{18}$ ,  $\frac{28}{57}$ ,  $\frac{75}{82}$ ,  $\frac{135}{112}$ ,  $\frac{245}{156}$ ,  $\frac{321}{350}$ ,  $\frac{1539}{700}$ ,  $\frac{2829}{1728}$

### 4. Հետևյալ տոկոսներն արտահայտեցեք կոտորակի ձևով՝

- 1) 1<sup>0</sup>/<sub>0</sub>, 7<sup>0</sup>/<sub>0</sub>, 10<sup>0</sup>/<sub>0</sub>, 27<sup>0</sup>/<sub>0</sub>, 40<sup>0</sup>/<sub>0</sub>, 121<sup>0</sup>/<sub>0</sub>, 359<sup>0</sup>/<sub>0</sub>, 100<sup>0</sup>/<sub>0</sub>, 200<sup>0</sup>/<sub>0</sub>  
 2) 2,5<sup>0</sup>/<sub>0</sub>, 5,4<sup>0</sup>/<sub>0</sub>, 7,2<sup>0</sup>/<sub>0</sub>, 8,3<sup>0</sup>/<sub>0</sub>, 18,3<sup>0</sup>/<sub>0</sub>, 29,1<sup>0</sup>/<sub>0</sub>, 0,6<sup>0</sup>/<sub>0</sub>, 0,11<sup>0</sup>/<sub>0</sub>  
 0,27<sup>0</sup>/<sub>0</sub>, 1,4<sup>0</sup>/<sub>0</sub>, 412,25<sup>0</sup>/<sub>0</sub>, 105,75<sup>0</sup>/<sub>0</sub>, 109,4<sup>0</sup>/<sub>0</sub>

3)  $\frac{1}{2}$ <sup>0</sup>/<sub>0</sub>,  $1\frac{1}{2}$ <sup>0</sup>/<sub>0</sub>, 17<sup>0</sup>/<sub>0</sub>, 24<sup>0</sup>/<sub>0</sub>,  $8\frac{3}{4}$ <sup>0</sup>/<sub>0</sub>, 19<sup>0</sup>/<sub>0</sub>, 124<sup>0</sup>/<sub>0</sub>

4) Բանավոր՝ 20<sup>0</sup>/<sub>0</sub>, 25<sup>0</sup>/<sub>0</sub>, 50<sup>0</sup>/<sub>0</sub>, 75<sup>0</sup>/<sub>0</sub>,  $33\frac{1}{3}$ <sup>0</sup>/<sub>0</sub>

### 5. Վերոշեցեք՝

ԹՎԻ ՏՈԿՈՍԸ  
ԳՏՆԵԼԸ

1) 1250 ո. 8<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

2) 3,6 սոննի 4,5<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

3) 180 կմ-ի 13,4<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

4) 12 լ-ի 0,5<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

5) 1,3 մլրդ. ո. 8,3<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

6) 52 400 ս-ի 0,3<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

7) 9,6 ս-ի 7<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

8) 18,4 լ-ի 3,75<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

9) 540 կգ-ի 0,75<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

10) 170 կմ-ի 12,5<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

11) 940,8 մ-ի 13,5<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

12) 0,17 մ-ի 1,2<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

13) 36 մկմ-ի 35<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

14) 48 վր-ի 30<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

15) 124,75 հա-ի 65,2<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

16) 58,14 ա-ի 13,6<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

17) 56,2 ֆառ. մ-ի 7,45<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

18) 81 խոր. մ-ի 3,7<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

### 6. Գտեք՝

1) 48,7-ի 5<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

2) 71,3-ի 8<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

3) 80-ի 1,5<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

4) 45-ի 1,4<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

5) 125-ի 0,8<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

6) 240-ի 16,5<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

7) 1760-ի 3,25<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

8) 4,5-ի 0,6<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

9) 12,4-ի 0,4<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

10) 12-ի  $1\frac{1}{2}$ <sup>0</sup>/<sub>0</sub>-ը

11) 120-ի  $7\frac{1}{3}$ <sup>0</sup>/<sub>0</sub>-ը

7. Գտեք՝ 350-ի 120<sup>0</sup>/<sub>0</sub>-ը, 540-ի 154<sup>0</sup>/<sub>0</sub>-ը, 890-ի 275<sup>0</sup>/<sub>0</sub>-ը,

6,4-ի 235<sup>0</sup>/<sub>0</sub>-ը՝

### 8. Բանավոր հաշվեցեք՝

1) 425-ի 10<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

2) 250-ի 2<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

3) 800-ի 5<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

4) 400-ի 25<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

5) 42,5-ի 20<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

6) 1850-ի 50<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

7) 600-ի 30<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

8) 50-ի 30<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

9) 120-ի 40<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

10) 300-ի 60<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

11) 710-ի 70<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

12) 3200-ի 75<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

13) 350-ի 4<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

14) 40-ի 12<sup>1</sup>/<sub>2</sub><sup>0</sup>/<sub>0</sub>-ը

15) 400-ի 1<sup>1</sup>/<sub>2</sub><sup>0</sup>/<sub>0</sub>-ը

16) 60,12-ի 33<sup>1</sup>/<sub>3</sub><sup>0</sup>/<sub>0</sub>-ը

17) 4000-ի 1<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

18) 5600-ի 3<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

19) 3700-ի 2,5<sup>0</sup>/<sub>0</sub>-ը

9. 120 400 բնակիչ ունեցող քաղաքում աճք կազմում է տարեկան միջին թվով 4<sup>0</sup>/<sub>0</sub>: Վերոշեցեք այդ քաղաքի բնակչու-  
թյան թիվը մի տարուց հետո:

10. Տան կառուցումն արժեք 9800 ուրբի, վերից 35<sup>0</sup>/<sub>0</sub> վճարված է աշխատանքի համար, մնացածը շինանյութին: Ի՞նչ արժեք շինանյութը:

11. Ավանի 550 բնակիչներից 60<sup>0</sup>/<sub>0</sub> բանվորներ են, 34<sup>0</sup>/<sub>0</sub> ծառայողներ, մնացածները չեն աշխատում: Ամեն մի կատեգո-  
րիայից քանի հոգի յին ապրում ավանում:

12. Գործարանում աշխատում են 4550 բանվոր: Ցարեվեր-  
ջին բանվորների թիվն ավելացավ 18<sup>0</sup>/<sub>0</sub>-ով: Վերոշեցեք բանվոր-  
ների թիվը տարեվերջին:

13. Բանվորն աշխատավարձն ստացավ ու հաշվեց՝

Ամսվա աշխատավարձ . . . . . 245 ուրբի

Լրացուցիչ աշխատավարձ . . . . . 20<sup>0</sup>/<sub>0</sub>

Փոխառության . . . . . 10<sup>0</sup>/<sub>0</sub> ամբողջ գումարի

Պրոֆմբության . . . . . 1<sup>0</sup>/<sub>0</sub>

Կատարած մոեծուսներից հետո նրա մոտ ինչքան փող մնաց:

14. Կաթից կարելի յե ստանալ 10<sup>0</sup>/<sub>0</sub> շոռ: Մի գույլ կաթից

(12,3 կգ) ինչքան շոռ կստացվի:

15. Անտոնովյան խնձորը պարունակում է 10,7<sup>0</sup>/<sub>0</sub> շաքար

(ըստ քաշի): 19 կգ անտոնովյան խնձորը ինչքան շաքար է պարունակում (0,1 կգ-ի ճշտությամբ):

16. Ածխագործերն ստանում են ածխացրած փայտի 20<sup>0</sup>/<sub>0</sub>-ի չափով ածուխ: 1 խոր. մ յեղենու փայտից (380 կգ) քանի կի-  
լոգրամ ածուխ կստանան:

17. Շաքարը սառը ջրում լուծվում է վերցրած ջրի կշռի 66,1<sup>0</sup>/<sub>0</sub>-ի քանակությամբ: Մի բաժակ (250 գ) ջրում ինչքան շա-  
քար կարելի յե լուծել:

18. Դպրոցում կա 450 աշակերտ: Մի դասարանի աշակերտ-  
ների թիվը կազմում է ընդհանուր թվի 8<sup>0</sup>/<sub>0</sub>-ը, մյուս դասարա-  
նի աշակերտների թիվը կազմում է ընդհանուր թվի 10<sup>0</sup>/<sub>0</sub>-ը:  
Մնացած դասարաններում քանի աշակերտ կա:

19. Դասարանում ըստ ցուցակի հաշվվում է 35 աշակերտ  
Ֆոտոխմբակի պարագմունքին ներկայացան 80<sup>0</sup>/<sub>0</sub>: Գնել աշա-  
կերտ են բացակայում:

20. Արույրն իրանից ներկայացնում է համաձուլվածք՝ բաղ-  
կացած 64,8<sup>0</sup>/<sub>0</sub> կարմիր պղնձից, 32,8<sup>0</sup>/<sub>0</sub> ցինկից և 2,4<sup>0</sup>/<sub>0</sub> կապա-  
րից: Վերոհիշյալ լուրաքանչյուր նյութից քանի կիլոգրամ  
պէտք է վերցնենք, զոր ստանանք 0,75 ս արույր:

21. Նավթագաթիչ գործարանում նավթը դստելիս ստացվում  
է 30<sup>0</sup>/<sub>0</sub> կերոսին և 53<sup>0</sup>/<sub>0</sub> մաղութ, իսկ մնացածը գնում է վառե-  
լի ու կորուստի վրա: 64 ս նավթից ինչքան կերոսին և մա-  
ղութ կստացվի:

22. Ածխածնային պողպատի ունի հետևյալ քիմիական  
բաղադրությունը. ածխածին՝ 1,05<sup>0</sup>/<sub>0</sub>, մարդանից՝ 1,1<sup>0</sup>/<sub>0</sub>, կրեմ-  
նիում՝ 0,2<sup>0</sup>/<sub>0</sub>, մնացած մասը մաքուր յերկաթ: Վերոշեցեք  
40<sup>3</sup>/<sub>4</sub> կգ կշռող պողպատի ձողի բոլոր բաղադրիչ մասերի քա-  
նակը:

23. Կոլտնտեսությունը կարկոտանարումից ապահովագրեց  
իր ցանքսը, գնահատելով 19850 ուրբի: Ինչքան պետք է վճա-  
րի ապահովագրության համար, յեթե ապահովագրման վճար  
հաստատված է 1,1<sup>0</sup>/<sub>0</sub>:

24. Միջնակարգ դպրոցում սովորում են 240 հոգի: 5-րդ  
դասարանի աշակերտների թիվը կազմում է ընդհանուրի  
16<sup>2</sup>/<sub>3</sub><sup>0</sup>/<sub>0</sub>-ը, 6-րդ դասարանի աշակերտների թիվը կազմում է 5-րդ

դասարանի աշակերտների թվի 80%<sub>0</sub>-ը: Քանի՞ աշակերտ կա 5-րդ և 6-րդ դասարաններում:

25. Գրադարանում կա 4800 գիրք ուսուցիչներին, գերմաներեն և ֆրանսերեն լեզուներով: Ֆրանսերեն գրքերի թիվը կազմում է բոլորի 40%<sub>0</sub>-ը, իսկ գերմաներեն գրքերի թիվը կազմում է ֆրանսերեն գրքերի 25%<sub>0</sub>-ը: Գրադարանում քանի՞ ուսուցիչ գիրք կա:

26. Կովի կաթը տալիս է 15%<sub>0</sub> սեր (ըստ քաշի): Սերը տալիս է 20%<sub>0</sub> կարագ (ըստ քաշի): 10 <sup>1</sup>/<sub>2</sub> գուլ կաթից ինչքան կարագ կստացվի (մի գուլ կաթը կշռում 12,3 կգ):

27. Գործարաններն ամեն մի բանվորի համար ապահովագրական դրամարկը մուծում են նրա աշխատավարձի 15,6%<sub>0</sub>-ը: Գործարանը 210 ուրլի աշխատավարձ ստացող բանվորի համար ապահովագրական դրամարկը ինչքան պետք է մուծի:

28. Վարը ժամկետից շուտ կատարելու համար կոլտնտվարչությունը վորոշեց պարգևատրել բրիգադին իր հիմնական աշխուրների 20%<sub>0</sub>-ի չափով: Քանի՞ աշխուր պետք է ավելացնել յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխուրերին, յեթե հիմնական աշխուրների թիվը ըստ կարգերի 17,2 է:

29. Բամբակի նորմալ խոնավությունը կազմում է ընդհանուր քաշի 8,5%<sub>0</sub>-ը: Գործարանն ստացավ 27 ս բամբակ, վորի խոնավությունը կազմում է 10,2%<sub>0</sub>: Ստացված բամբակի քաշն ինչքանով ավելի յե նորմալ խոնավություն ունեցող բամբակի քաշից:

30. Բարձր տեսակի հալոցային պողպատը պետք է պարունակի ֆոսֆոր խառնուրդներ (ֆոսֆոր և ծծումբ), յուրաքանչյուրը վոր ավել քան <sup>3</sup>/<sub>200</sub>%<sub>0</sub>-ի չափով: 240 <sup>1</sup>/<sub>2</sub> կգ կշռով պողպատի ձուլվածքի մեջ այդ խառնուրդներից ամենաաշատն ի՞նչ քանակով է թույլատրվում:

31. № 3 ձուլածո չուգունը պարունակում է՝ ածխածին 3,5%<sub>0</sub>, կրեմնիում՝ 1,5%<sub>0</sub>, մարգանեց՝ 1%<sub>0</sub>, ֆոսֆոր՝ 0,4%<sub>0</sub> և ծծումբ 0,4%<sub>0</sub>: Վորոշեցեք այս ելեմենտներից յուրաքանչյուրի քանակը 1 տոնն ձուլածո չուգունի մեջ:

ԹՎԻ ՂՏԵԵԼԸ ՏՈԿՈՒՄԻ ՄԻՋՈՑՈՎ

32. Վճր թվի 3%<sub>0</sub>-ը, 6%<sub>0</sub>-ը, 10%<sub>0</sub>-ը, 12%<sub>0</sub>-ը, 25%<sub>0</sub>-ը, 50%<sub>0</sub>-ը հավասար է 24-ի: (Լուծեցե՛ք բանավոր):

33. Վճր թվի 3%<sub>0</sub>, 4%<sub>0</sub>, 6%<sub>0</sub>, 8%<sub>0</sub>, 12%<sub>0</sub>, 20%<sub>0</sub>, 33 <sup>1</sup>/<sub>3</sub>%<sub>0</sub>, 50%<sub>0</sub>-ը հավասար է 36-ի: (Լուծեցե՛ք բանավոր):

34. Վճր թվի 5%<sub>0</sub>, 15%<sub>0</sub>, 40%<sub>0</sub>-ը, կազմում է 22,5:

35. Վճր թվի 0,6%<sub>0</sub>-ը կազմում է 50,1, վճր թվի 1,2%<sub>0</sub>-ը կազմում է 15:

36. Վճր մեծության՝ 8%<sub>0</sub>-ը կազմում է 164 ուրլին, 5%<sub>0</sub>-ը կազմում է 68 կգ, 0,4%<sub>0</sub>-ը կազմում է 52 մ, 1,5%<sub>0</sub>-ը կազմում է 2,7 ս, 9,1%<sub>0</sub>-ը կազմում է 7,8 լ, 18,2%<sub>0</sub>-ը կազմում է 54,6 հա:

37. Վճր մեծության՝ 11%<sub>0</sub>-ը կազմում է 80,3 խոր մ, 12%<sub>0</sub>-ը կազմում է 51,6 առ:

38. (Բանավոր). վճր թվի 4 <sup>1</sup>/<sub>2</sub>%<sub>0</sub>-ը կազմում է 16 <sup>1</sup>/<sub>5</sub>,

4 <sup>3</sup>/<sub>8</sub>%<sub>0</sub>-ը կազմում է 75, 3 <sup>4</sup>/<sub>5</sub>%<sub>0</sub>-ը կազմում է 19 <sup>1</sup>/<sub>2</sub>:

39. (Պատասխանները տվե՛ք հասարակ կոտորակներով): Գտե՛ք թիվը, յեթե նրա՝

- 1) 3%<sub>0</sub>-ը հավասար է 36-ի 3) 14%<sub>0</sub>-ը հավասար է 7-ի
2) 5%<sub>0</sub>-ը » » 18-ի 4) 8%<sub>0</sub>-ը » » 24,8-ի:

40. Գտե՛ք թիվը, յեթե նրա՝

- 1) 4,5%<sub>0</sub>-ը հավասար է 9-ի 3) 12,5%<sub>0</sub>-ը հավասար է 7,5-ի
2) 3,75%<sub>0</sub>-ը » » 75-ի 4) 5,6%<sub>0</sub>-ը » » 4,2-ի:

41. (Բանավոր). յեթե թվին ավելացնենք նրա 10%<sub>0</sub>-ը, ապա կոտանանք 440: Ինչի՞ յե հավասար այդ թիվը:

42. Գտնել թիվը, յեթե հայտնի յե, վոր նա կզառնա 420, յեթե ավելացնենք նրա 12%<sub>0</sub>-ը, կզառնա 434, յեթե պակասեցնենք նրա 16%<sub>0</sub>-ը:

43. (Բանավոր). գտե՛ք այն թիվը, վորի 17%<sub>0</sub>-ը, 14%<sub>0</sub>-ից 27-ով մեծ է:

44. Իմացեք, ինչ աշխատավարձ ե ստանում բանվորը, յեթե աշխատավարձի  $4\%$ -ը կազմում է 7 ա. 08 կ.:
45. Գործարանի բանվորներից մեծահասակների զարթոցում սովորում են 144 հոգի, վորը կազմում է բանվորների ընդհանուր թվի  $7,5\%$ -ը: Վորոշեցեք գործարանի բանվորները թիվը:
46. Ուկրաինան ունի 5,85 մլն հա անառ, վորը կազմում է Ուկրաինայի ամբողջ մակերեսի  $13\%$ -ը: Հաշվեցեք Ուկրաինայի մակերեսը:
47. Արհեստանոցում վեցորյակում պատրաստում են 252 գետալ, վորը կազմում է ամսվա արտադրանքի  $28\%$ -ը: Հաշվեցեք արհեստանոցի մի ամսվա ղետալների արտադրանքը:
48. Խնայ-դրամարկղը վճարելու համար ներկայացրին «Ինդուստրացման փոխառության» տոմսերի մի տարվա կարճաներ, ընդամենը 24 ուրբուր: Վորոշեցեք տոմսերի արժեքը, յեթե հայտնի յե, վոր «Ինդուստրացման փոխառությունը» տալիս է տարեկան  $6\%$ :
49. Անգլիայի մակերևույթը կազմում է նրա զաղութներին մակերևույթի  $0,8\%$ -ը և հավասար է 314 000 կառ. կմ-ի: Բանիք քառակուսի կիլոմետր են բռնում Անգլիայի զաղութները:
50. Դասաբանում գասից բացակայում են 4 հոգի, վորը կազմում է ամբողջ աշակերտների թվի  $10\%$ -ը: Բանիք աշակերտ կա դասարանում:
51. Ապրանքը փոխադրավարձով նստեց 394 ա. 20 կ., ընդվորում փոխադրավարձը կազմում է ապրանքի արժեքի  $8\%$ -ը: Ի՞նչ արժե ապրանքն առանց փոխադրավարձի:
52. 1890 հրացանից չստուգվածները կազմում են ստուգվածների  $5\%$ -ը: Ընդամենը քանի՞ չստուգված հրացան կա:
53. Դպրոցի աշակերտների թիվը ավելացավ  $40\%$ -ով և հավասարվեց 560-ի: Վորոշեցեք քանի՞ աշակերտ է նոր ընդունվել:
54. Բանվորն իր աշխատավարձից  $1\%$  միության,  $6\frac{1}{2}\%$  ինդուստրացման փոխառության,  $1\%$  փոխողնության զբամարկղը մուծելուց հետո ուներ 192 ա. 15 կոպ.: Ինչքան էր բանվորի աշխատավարձը:
55. Դազգյահի արժեքը չորս տարի աշխատելուց հետո հա-

- վանարվում է նրա սկզբնական արժեքի  $68\%$ -ին, ընդվորում զազգյահը գնահատվում է 238 ուրբի: Վորոշեցեք զազգյահի սկզբնական արժեքը:
56. Արհեստանոցի վերանորոգումը նստեց 1498 ուրբի, ընդվորում նախահաշվից ավելի ծախսեցին  $7\%$ : Վորոշեցեք վերանորոգման նախահաշվային գումարը:
57. Բանվորը  $15\%$  հավելումով միասին ստացավ 230 ուրբի աշխատավարձ: Մինչև հավելումն ինչ աշխատավարձ էր ստանում նա:
58. Գործարանի տարեկան արտադրանքն է 16,4 մլն ուրբի, ընդվորում գործարանն իր պլանը գերակատարեց  $2,5\%$ -ով: Վորոշեցեք արտադրանքն ըստ պլանի:
59. Յեթե յեզած փողի  $7\frac{1}{2}\%$ -ը ծախսեն, ապա կմնա 101 ա. 75 կոպեկ: Ինչքան փող կա:
60. 400 գ թեյը 2 ա.  $47\frac{1}{2}$  կոպեկով ծախելիս անում են  $8\frac{1}{3}\%$  ղեղչ: Ի՞նչ արժե 400 գրամ թեյը:
61. Խնձորը չորանալիս կորցնում է իր քաշի  $8\frac{4}{10}\%$ -ը: Ինչքան թարմ խնձոր պետք է վերցնենք, վոր ստանանք 10 կգ խնձորի չիր:
62. Սուրճը բովկելիս կորցնում է իր քաշի  $12\frac{1}{2}\%$ -ը: Բանիք կիլոգրամ թարմ սուրճ պետք է վերցնել, վոր ստացվի 42 կգ բովված սուրճ:
63. Միսը յեփելիս կորցնում է իր քաշի մոտ  $35\%$ -ը: Ինչքան հում միս պետք է վերցնել, վոր ստացվի 400 գ յեփած միս:
64. 1932 թ.-ի վերջին ԽՍՀՄ-ում բնակչությունը կազմում էր 165,7 մլն հոգի, ավելանալով առաջին հնդամյակի ընթացքում  $7,46\%$ -ով: Վորոշեցեք ԽՍՀՄ-ի բնակչության թվական աճն առաջին հնդամյակի ընթացքում:
65. Ոճառի քաշը  $55\%$ -ով ավելի յե նրա պատրաստման համար վերցրած ճարպից: 31 կգ ոճառ ստանալու համար ինչքան ճարպ պետք է վերցնել:

66. Լավորակ հաճարի ալյուրը տալիս է  $44\frac{0}{10}$  աճ: 18 կգ սե հաց թխելու համար ինչքան ալյուր պետք է վերցնել:

67. ա) Թարմ սունկը պարունակում է  $90\frac{0}{10}$  ջուր, չորացրածը՝  $12\frac{0}{10}$ : 10 կգ թարմ սնկից ինչքան չոր սունկ կստացվի:

բ) Կաթը տալիս է  $23\frac{0}{10}$  սեր, իսկ սերը՝  $21\frac{0}{10}$  կալազ: Քանի կիրգրամ կաթ պետք է վերցնել (1 կգ-ի ճշտությամբ), վոր ստացվի 7 կգ կարագ:

68. Այժմ ժամը քանի՞ն է, լեթե որվա մնացած մասը հավասար է անցած մասի  $60\frac{0}{10}$ -ին:

69. Այժմ ժամը քանի՞ն է, լեթե որվա անցած մասը հավասար է մնացածի  $20\frac{0}{10}$ -ին:

Տոկոսալից հարաբերություն

70. 420 կգ-ը, 1,2 տոննը, 450 կգ-ը, 15 տոննի վճր տոկոսն է կազմում:

71. 43 կմ-ը, 32,25 կմ-ը 215 կմ-ի վճր տոկոսն է կազմում:

72. 3,6 լ-ը, 36 լ-ը, 0,18 լ-ը, 14,4 հլ-ի վճր տոկոսն է կազմում:

73. 16 ուռբլին, 4,4 ուռբլին, 20,25 ուռբլին, 320 ուռբլու վճր տոկոսն է կազմում:

74. 42,9 խոբ. մ-ը, 300,3 խոբ. դմ-ը 214,5 խոբ. մ-ի վճր տոկոսն է կազմում:

75. 325 կգ-ը, 450 կգ-ը, 1,4 ս-ը, 7,8 ս-ը, 9,4 ս-ը, 4,7 տոննի վճր տոկոսն է կազմում ( $0,1\frac{0}{10}$ -ի ճշտությամբ):

76. Տոկոսներով արտահայտեցե՛ք՝ ա) 0,75, բ) 0,84, գ) 0,3, դ) 0,935, ե) 0,867, զ) 1,27, է) 2,5, ը)  $\frac{1}{2}$ , թ)  $\frac{1}{4}$ , ժ)  $\frac{9}{10}$ , ժա)  $\frac{2}{3}$ :

77. 2-ը հետևյալ թվերի վճր տոկոսն է կազմում՝ ա) 2-ի, բ) 8-ի, գ) 20-ի, դ) 40-ի, յե) 50-ի, զ) 100-ի: (Լուծեցե՛ք բանավոր):

78. 150-ը հետևյալ թվերի վճր տոկոսն է կազմում՝ ա) 600-ի, բ) 900-ի, գ) 750-ի, դ) 200-ի:

79. ա) 5-ը 9-ի, բ) 24-ը 60-ի, գ) 16,75-ը 59,34-ի,

դ)  $4\frac{4}{5}$ -ը 40-ի վճր տոկոսն է կազմում ( $0,1\frac{0}{10}$ -ի ճշտությամբ):

80. Հետևյալ հարաբերություններն արտահայտեցե՛ք տոկոսներով՝ ա) 15 ո. : 25 ո., բ) 80 կգ : 400 կգ, գ) 35 : 60 ( $0,1\frac{0}{10}$ -ի ճշտությամբ):

81. 1 դմ-ը, 1 սմ-ը, 3 դմ-ը, 7 մմ-ը, մետրի վճր տոկոսն է կազմում:

82. Լուծույթում քանի՞ տոկոս կարբոլյան թթու կստացվի, լեթե խառնուրդ 100 գ ջուրն ու 5 գ կարբոլյան թթուն:

83. 600 աղյուս տեղափոխելիս կոտրվեցին 15 հատ: Կոտրվածները քանի՞ տոկոս են կազմում:

84. 225 կգ հանքից ստացվում է 34,2 կգ պղինձ: Ինչքան է հանքի տոկոսային պարունակությունը:

85. Վարսակի 1350 հատիկից ծլունակ դուրս յեկան միայն 1000-ը: Ինչքան էր սերմի ծլունակության տոկոսը:

86. 5 կգ ալյուրից ստացվեց 1,75 կգ աճ: Աճը քանի՞ տոկոս է կազմում:

87. Սոդայի բյուրեղների յուրաքանչյուր 286 գ-ի մեջ պարունակում է 108 գ ջուր: Ինչքան է ջրի պարունակության տոկոսը՝ սոդայի բյուրեղների մեջ:

88. Վարունգի թթու պատրաստելիս մի դուլլ (12 կգ) ջրին խառնում են  $\frac{3}{4}$  կգ աղ: Տոկոսներով արտահայտեցե՛ք լուծույթի ամրությունը:

89. Սովորական լերկաթահանքը պարունակում է 160 կըռնամաս հանքից 112 կըռնամաս լերկաթ: Յերկաթը հանքի վճր տոկոսն է կազմում:

90. 1200 կգ ճահնդեղից ստացվում է մինչև 180 կգ շաքար: Քանի՞ տոկոս է կազմում այդ:

91. 210 կգ կաղնու խեժից տնայնագործները պատրաստում են ամենաշատը 10,5 կգ սկիպիտար: Քանի՞ տոկոս սկիպիտար է ստացվում:

92. Ապրանքը 7 ուռբլով գնելիս զեղչ արին 5 կոպեկ: Վորոշեցե՛ք զեղչի տոկոսը:

93. Բանվորն իր ստացած 215 ռուբլի աշխատավարձից միոսթյան և փոխոգնության դրամարկը մուծեց 4,3 ռուբլի: Վորոշեցեք մուծման տոկոսը:

94. Մեկ կիրգրամ հացի գինը 2 ռուբլուց իջավ մինչև 1 ռուբլի 70 կոպեկի: Հացի գինը քանի՞ տոկոսով իջավ իր սկզբնական գնի նկատմամբ:

95. Աշակերտները 160 դասից մի ամսում բաց թողին 12 դաս: Վորոշեցեք բաց թողած դասերի տոկոսը:

96. (Բանավոր). գործարանում գերանդու արտադրանքն հավասարվեց ամսական 36 000 հատի: Հիմնական վերանորոգումից հետո արտադրանքը հասավ 48 000-ի: Գերանդու արտադրանքը քանի՞ տոկոսով աճեց:

97. Գործարանը մեքենայի գնման ու տեղակայման վրա ծախսեց 4500 ռուբլի: Հայտնի չե, վոր 10 տարուց հետո մեքենան կանպետքանա, ընդվորում նրա ջարդը (ЛОМ) կարժենա 900 ռուբլի: Վորոշեցեք մեքենայի մաշման տոկոսը մի տարում:

98. Ալյուրի խոնավությունը վորոշելու համար վերցրեցին 4,8 կգ նմուշ և չորացրին, վորից հետո նրա քաշը դուրս յեկավ 4,48 կգ: Գտեք խոնավության տոկոսը:

99. (Բանավոր). հրացանից կատարեցին 45 ձգյուն, ընդվորում նպատակին խփեցին 36 գնդակ: Վորոշեցեք զիպչելու տոկոսը:

100. (Բանավոր). հինգ դասարանների 200 աշակերտներից, բոլոր առարկաներից վոչ առաջադեմների թիվը դուրս յեկավ 14 հոգի: Աշակերտության քանակի վճր տոկոսն է վոչ առաջադեմ:

101. Մեխանիկական արհեստանոցի պատրաստած 245 դետալներից 15 հատն անպետք են: Խոտանն ի՞նչ տոկոս է կազմում (0,1% ճշտությամբ):

102. Վորոշեցեք ածխի մոխրացումը տոկոսներով, յեթե հայտնի չե, վոր 1 տոնն վառված ածխից ստացվում է 58 կգ մոխիր:

103. Շարքացանի զեպքում 1 հեկտարի համար պահանջվում է 120 կգ սերմ, շարքացանի զեպքում 97,5 կգ: Շարքացանի զեպքում քանի՞ տոկոս սերմ է խնայվում:

104. Գործարանն 8 ժամյա բանվորական որից անցավ 7 ժամյա բանվորական որվա, առանց աշխատավարձի փոփոխ-

ման: Բանվորների մի ժամվա աշխատավարձը քանի՞ տոկոսով բարձրացավ:

105. Իհտոն ստանալու համար վերցնում են 1 օ ցեմենտ, 2 օ ալագ և 6 օ խիճ: Գտեք բետոնի բաղադրուցիչ մասերի առկոսային պարունակությունը:

106. Դործարանի 576 բանվորներից կուսակցության անդամ ու թեկնածու են 145 հոգի: Այդ թիվը քանի՞ տոկոս է կազմում (0,1% ճշտությամբ):

107. Առաջին հնգամյակի սկզբում մեքենաների ու գործիքների արժեքը ԽՍՀՄ-ի գյուղատնտեսության մեջ կազմում էր 1150 մլն ռուբլի: Հնգամյակի վերջում ավելացավ 1600 մլն ռուբլով: Վորոշեցեք աճման տոկոսը (1% ճշտությամբ):

108. 1 խոք. մ նոր կարած փայտը կշռում է 900 կգ, իսկ բաց ողում չորացածը՝ 550 կգ: Չորանալու ժամանակ փայտն իր քաշից քանի՞ տոկոս է կորցրել:

109. Սերմացուի մաքրությունը վորոշելու համար վերցրեցին 10,4 գ հաճար: Պարզվեց, վոր այս քանակի սերմի մեջ պարունակվում է 0,3 գ մեռած աղբ, 0,2 գ ֆլասաված սերմեր և 0,4 գ մուրբուլսի սերմեր: Տոկոսներով հաշվեցեք վերցրած սերմացուի մաքրությունը:

110. Աշակերտը զիրքը դնեց 1 ո. 0,2 կ: Խանութը քանի՞ տոկոս զեղչ արեց, յեթե զբքի անվանական արժեքը 1 ո. 20 կ. էր:

111. 300 կգ կշռող բրոնզե ձուլը պարունակում է 250 կգ կարմիր պղինձ, 18,1 կգ անագ, 2,4 կգ արճիճ, 7,9 կգ ցինկ: Տոկոսներով արտահայտեցեք բաղադրիչ մասերի քանակները:

112. Կոլանտեսությունն ունի 370 հա վարելահող, 140 հա մարգագետին, 82 հա անտառ և 96 հա անպետք հող: Յուրաքանչյուր հանդակ ամբողջ հողի վճր տոկոսն է կազմում:

113. Գործարանը պլանով նախատեսված 850 տրակտորի փոխարեն բաց թողեց 884 տրակտոր: Գործարանը պլանը քանի՞ տոկոսով գերապատարեց:

114. Կծային չափումների մեջ ճշգրիտ չափումների համար թուլատրելի սխալը 2 մետրի մեջ չպետք է անցնի 0,2 մմ-ը: Հաշվեցեք թուլատրելի սխալի տոկոսը:

115. Գյուղատնտեսական փորձակայանում 2 միատեսակ արտերում ցանված են ցորեն: Արտերից մեկը պարարտացրած

եր, իսկ մյուսը՝ վոչ: Պարարտացրած արտը ավելց 169 կգ բերք, իսկ մյուսը՝ 134 կգ: Գոմաղբը քանի՞ տոկոսով բարձրացրեց բերքատվությունը:

116. Առաջին հնգամյակի վերջում՝

	Ըստ պլանի նախատեսված եր	Փաստորեն կար
Բանվորներ և ծառայողներ . . .	15,8 մլն հոգի	21 մլն հոգի
Աշխատավարձի ֆոնդ . . . . .	15,7 մլն ուրլի	26,8 մլն ուրլի
Սոցիալական ապահովագրություն	1950 մլն ուրլի	3490 մլն ուրլի

Պլանը քանի՞ տոկոսով կատարվեց:

117. 1925 թվին Համ Կ(բ)Կ-ի շարքերում գտնվում էին 772 000 անդամ, 1929 թվին՝ 1530 000, 1932 թվին՝ 2 850 000: Հաշվեցեք Համ Կ(բ)Կ-ի աճը տոկոսներով:

118. Հնգամյա պլանով նախատեսված եր 1932 թվին նախագրոցական հիմնարկներում ընդգրկել 763 000 յերեխա: Փաստորեն 1932 թվի վերջին նախագրոցական հիմնարկներում ընդգրկված եր 4 470 000 յերեխա: Քանի՞ տոկոսով գերազանցված է Հնգամյա պլանը:

119. Լրացրեք աղյուսակը.

Գյրոցներում սովորողների թիվը 1932 թվին					
I աստիճանի			II աստիճանի		
Հնգամյա պլանը ավյալներով սահմանվում եր	Փաստորեն սովորում էին 1932 թվին	Գերակատարման տոկոսը	Հնգամյա պլանի ավյալներով սահմանվում եր	Փաստորեն սովորում էին 1932 թվին	Գերակատարման տոկոսը
10 400 000	12 872 000	?	1 474 000	2 781 000	?

Տոկոսային հաշվումների վերաբերյալ խնդիրներ

120. ա) 6,26 մ յերկարություն և 5,6 մ լայնություն ունեցող սենյակի հատակը տախտակելու համար քանի՞ տախտակ է պահանջվում, յեթե տախտակի յերկարությունն է 6 մ, իսկ լայնությունը՝ 0,24 մ:

բ) Ուղիղ պատերով փոսը, վորի յերկարությունն է 3,4 մ, լայնությունը՝ 3,1 մ և յտրությունը 1,9 մ, մինչև 70% ընդված է հանգած կրով: Ինչի՞ յե հավասար այդ կրի ծավալը:

121. Կոպեկատիվ ուղարկեցին 3 վագոն կարտոֆիլ, յուրաքանչյուրը 15,8 ս: Տեղ հասնելիս պարզվեց, վոր կարտոֆիլի քաշը 40,29 տոնն էր: Վորոշեցեք կորստի տոկոսը:

122. Ապրանքն արժե 2200 ուրլի: Սկզբում գեղչ արեցին այդ ապրանքի արժեքի 10% ի չափով, այնուհետև առաջին գեղչից հետո ստացված արժեքի 15% ի չափով: Վորոշեցեք ապրանքի արժեքը յերկրորդ գեղչից հետո:

123. Գործարանում շինվածքի արժեքը վորոշվեց 6 ո. 50 կ.: Այս գումարի մեջ մտնում են հետևյալ ծախսերը՝

- մատերիալ . . . . . 35%
- վառելիք . . . . . 24%
- աշխատավարձ . . . . . 23%
- գործարանային ընդհանուր ծախսեր . . . . . 11%
- սարքավորման ամորտիզացիա . . . . . 7%

Վորոշեցեք ծախսերն ըստ յուրաքանչյուր բաժնի:

124. Բանվորը աշխատավարձի 1% ընդ վճարեց պրոֆիտուսիային, 1 ո. 50 կ. պարտք, իսկ աշխատավարձի 21% ընդ ծախսեց հազուստ գնելու համար, վորից հետո նրա մոտ առձեռն մնաց 68 ո. 70 կ.: Նա ինչքան աշխատավարձ ստացավ:

125. 15% արձիճ պարունակող ինչքան բրոնզ կարելի յե ստանալ, յեթե ձուլվածքի համար վերցնենք 72 կգ արձիճ:

126. Գրադարանում կա 10 080 կտոր ուսերեն և գերմաներեն գրքեր, ընդվորում գերմաներեն գրքերի թիվը կազմում է ուսերենի 5% ընդ: Գրադարանում ինչքան ուսերեն և գերմաներեն գիրք կա:

127. Գիրքը գնեցին 15<sup>0</sup>/<sub>10</sub> զեղչով և վճարեցին 2 ու 21 կօ Խնչքան եր գրքի արժեքն առանց զեղչի:

128. 560 ուռբուլ արժողության ապրանքի վաճառքից ստացան 31<sup>0</sup>/<sub>2</sub> ոգուտ: Խնչքան ոգուտ ստացվեց և ապրանքն ինչքանով ծախեցին:

129. Մի հեկտար հողը տալիս և 1500 կգ ցորեն: Աղալուց ստացված ալյուրը կազմում է ցորենի 80<sup>0</sup>/<sub>10</sub>-ը: Ալյուրը հաց թխելիս ստացվում է 30<sup>0</sup>/<sub>10</sub> աճ: 10 հա հողից ստացված ցորենից քանի՞ կիլոգրամ հաց կստացվի:

130. 7 գ կշռող ամխի կտորն անալիզի լինթարկելիս պարզվեց, Վոր նա պարունակում է 5,2 գ ամխածին, 0,5 գ ջրածին, 0,42 գ թթվածին, 0,28 գ ազոտ, մնացածը՝ մոխիր: Վորոշեցե՞ք վերոհիշյալ նյութերի տոկոսային պարունակությունը:

131. Ընդամենն կա 1200 ուռբուլ որլիզացիա: Մի մասը 6 տոկոսային, մյուսը՝ 10 տոկոսային Այդ որլիզացիաներից առեկան հավասար յեկամուտ և ստացվում: Ի՞նչ գումարի 6 տոկոսային և ի՞նչ գումարի 10 տոկոսային որլիզացիա կա:

132. Կա միևնույն գումարի 6-տոկոսային և 10-տոկոսային որլիզացիաներ: Նրանցից ընդամենը 40 ուռբուլ յեկամուտ և ստացվում: Ի՞նչքան յեկամուտ կստացվի 6-տոկոսային որլիզացիաներից, ինչքան 10-տոկոսայիններից և ի՞նչ գումարի ելին որլիզացիաներից յուրաքանչյուրը:

133. 1927 թվի 10-տոկոսային փոխառություն 100 ուռբուլի անոց որլիզացիան բաժանորդագրելիս ծախվում էր 96 ուռբուլ: Բաժանորդագրելիս որլիզացիան քանի՞ տոկոս ոգուտ է բերում:

134. Գործարանում բանվորների 35<sup>0</sup>/<sub>10</sub>-ը կազմում են կանայք, իսկ մնացածը տղամարդիկ, վորոնց թիվը 420 հոգով ավելի յե կանանցից: Վորոշեցե՞ք բանվորների ընդհանուր թիվը:

135. Ռեկսից կտրեցին մի մասը, վորը կազմում է նրա յերկարության 72<sup>0</sup>/<sub>10</sub>-ը: Մնացած մասի քաշը հավասար է 52,5 կգ-ի: Վորոշեցե՞ք կտրված մասի քաշը:

